

23642

899.962

12-91

899.962.1-1

П-93

1002
6302
հարապետ

ընդհանր

23/10/38

ԽՀ.

1032

1

~~50-20/1725~~

ՇՈՐԱ ՐՈՒՍԹԱԻՆԻ

Ը Ն Ձ Ե Ն Ա Ի Ո Ր Ը

Պ Օ Է Մ Ա

ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱՐԵՒՈՐ ՏԵ-
ՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

(Շրկու պատկերով)

Հ ա մ առ օ ա ն ց
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑ

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Մ. Դ. Ռոտինյանցի
Типогр. М. Д. Ротинянца, на Гол. пр., д. № 41.
1896

ՇՈՐԱ ԲՈՒՍԹԱԻԼԻ

899.962

Ռ-94

✓

Ը Ն Ձ Ե Ն Ա Ի Ո Ր Ը

Պ Օ Է Մ Ա

ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ-ԵԻ ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒ-
ԹԻԻՆՆԵՐՈՎ,

(Երկու պատկերով)

2 0 0 3

Հ ա մ առ օ տ ե ց

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Յպարան Մ. Գ. Ռոտինյանցի

Типогр. М. Д. Ротинянца, на 1-ом пр., д. № 41.

1896


5013

2904559252

0000

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Апрѣля, 1896 г.

0000



გრიგოლ ციციშვილი



(Արտատպւած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

ՅԱՌԱԶԱՐԱՆ

ՇՈԹԱ ՐՈՒՍԹԱՒԵԼԻ ԵՒ ՆՈՐԱ ՊՕԷՄԱՆ

I

«Ընձենաւորը»¹⁾ վրաց ազգի անցեալի գրական ամենաշուքաւոր արտադրութիւնն է: Այս գրքի գոյութեամբն է, որ պահպանուել է վրացոց մէջ այն ճոխ լեզուն, որ գործ էին ածում հեղինակի կեանքի օրօք, այն է՝ 12-րորդ դարում: Այդ գրւածքի հեղինակը ընծայեց վրաց ազգին այնպիսի մի դանձ, որ անգնահատելի է: Դա մի ընդարձակ պոէմն է, որի հետ ծանօթութիւնը հայ ընթերցող հասարակութեան համար անհրաժեշտ է: Այդ մենք կը կատարենք «Ընձենաւորը» վերածելով համառօտ պատմածքի, դիտենալով հանդերձ, որ դորանով պէտք է ստիպւած լինենք զոհել բնագրի տաղաչափութեան շատ գեղեցկութիւնները: Ասենք հէնց այս տեղում, որ Շոթա Ռուսթաւելու «Ընձենաւորը» վաղուց արդէն իւր վրայ է դարձրել նաև եւրոպացի բանասէրներից ոմանց ուշադրութիւնը:

Վրաց գրականութեան լուսատու աստղը և բանաստեղծների նահապետ Շոթա Րուսթաւելին ապրում էր 12-րդ դարում Թամար թագուհու ժամանակ: Այդ երեւում է նոյն իսկ «Ընձենաւորի» յառաջաբանից և զանազան

¹⁾ Ընծու մորթի հազած մարդը. վրացերէն «վէփիւլիս տղասանի» (ვეფხისტყაოსანი).

պատմագիրներին առաջ բերած փաստերից (Բրոսէ, Բաբ-
րաձէ, Եոսեփանի և այլք):

Շոթա Ռուսթաւելին ծնեց Ախալցխայի մօտ գտնւ-
ած Ռուսթաւ գիւղում¹⁾: Ինքը Ռուսթաւելին ասում է
իւր համար՝ «Գրում եմ մի ոմն Մեսխի բանաստեղծս՝
Ռուսթաւ գիւղից: Ռուսթաւի այն մասը, ուր ծնել է
հեղինակը, կոչւում էր Սամսխիթ (վրացերէն՝ Սամես-
խէթի), այսինքն Մեսխանց թաղ, ուստի և հեղինակը կոչ-
ւում է երբեմն Մեսխի:

Ռուսթաւելու ծննդավայրի մասին կան թեր և դէմ
կարծիքներ. բայց, նայելով ժողովրդի մէջ պահպանւած
աւանդութեանց, հաւանական է, որ Ախալցխի կողմերը
լինի: Ռուսթաւելու ծննդեան տարին ճիշտ չափանի չէ.
մի հին ձեռագրում միայն նշանակւած է 1172—1216:
Նոյնպէս զրականապէս չափանի չէ թէ ովքեր են եղել
Ռուսթաւելու ծնողները. մի կասկածաւոր ձեռագրից
չափանի է, սակայն, որ նորա հայրը սարկաւագ է եղել:
Ռուսթաւելին մեծացել է հայրենի գիւղում, ապա նրան
տւել են Տբէթի վանքի (Արտւինի շրջանում, Աճարայում,
այժմ մահմեդական վրացոց մզկիթ) վանականներին,
որոնց մօտ նա գրել-կարդալն է սովորել: Տբէթի վանքից
բերել են Կախէթի Գրէմ քաղաքի արքունիքը²⁾: Այդ
պալատում նա մնացել է հինգ տարի, ապա կրթւել է
Խղալթուի (Թելաւի մօտերքը) դպրոցում. իսկ այդտեղից
ուղևորւել է Աթէնք կատարելագործւելու: (Այս տեղեկու-
թիւնները հանւած են մի հին ձեռագիր պատմութիւնից,

¹⁾ Ներկայումս այդ տեղում կալ Ռուսթաւ անունով պոս-
տի կայարան:

²⁾ Թելաւի մօտերքը՝ այժմ աւերակ և համանուն գիւղ:

որ մինչ օրս էլ չի հրատարակւել): 22 տարեկան հասա-
կում նա Աթէնքից դարձաւ Վրաստան:

Չնայած, որ Ռուսթաւելու «Ընձենաւորը» արդէն մի
պատկանելի գրականութիւն ունի թէ վրաց և թէ օտար
լեզուներով, բայց մինչև այժմ չի որոշւած թէ ինչ է
եղել նրա իսկական անունը և որտեղից են նրան Շոթա
անունը տւել: Իսկ ինչ վերաբերում է «Ռուսթաւելի» կոչ-
ման, ինքը հեղինակը հետևեալն է ասում իւր գրած-
քում. «ես, արհեստով Ռուսթաւելի, այս գործին եմ
ձեռնարկեր. Ինչպէս ընթերցողն էլ կը նկատի, Ռուսթաւե-
լին արհեստ է եղել. բայց ինչ արհեստ էր այդ—չափանի չէ:

Մի աղբիւր միայն կալ նրա իսկական անունն իմա-
նալու համար. այդ՝ Երուսաղէմի վրաց Ս. Խաչ վանքում
նկարած Ռուսթաւելու պատկերի տակ եղած արձանա-
գրութիւնն է. բայց ցաւօք սրտի մինչ օրս, չնայած բազ-
մաթիւ ուխտաւորների, չի կարդացւել: Զ. Ճիճիւնաձէի
ասելով, մի հին ձեռագրի համեմատ նրա աշխարհական
անունն եղել է Շոթա (հայերէն Աշոտ), իսկ Երուսաղէ-
մում ձգնւելիս Շիօ անունն է ստացել:

Կարծում են, որ Ռուսթաւելին այն երիտասարդնե-
րից մինը պիտի եղած լինէր, որոնք 12-րդ դարուց սկսած
Դաւիթ Աշխարհաշէն թագաւորի կարգադրութեամբ ու-
ղարկւում էին Աթէնք կրթւելու, ինչպէս յիշատակւում է
հայոց 13-րդ դարու Վարդան պատմիչը. նոյնն են վկա-
յում Թէյմուրազ թագաւորի գրածքները: Վերջնոցս
ասութեամբ Ռուսթաւելին բաւական ժամանակ մնացել է
Աթէնքում և ուսումնասիրել է աթէնական աստուծա-
բանութիւնը և փիլիսոփայութիւնը. այդտեղ նա պիտի
ուսումնասիրած լինի նոյնպէս և արաբական ու պարսկա-
կան լեզուները:

«Ընձենաւորն» մի հին ձեռագրի վերջում մի ան-
յայտ ոմն գրում է. «Շոթան մեծ ազգի որդի էր. գնա-
ցել է Յունաստան, ուր կրթւել է «Եւերիա» վրաց վան-
քում և Աթէնքում նա լսել է փիլիսոփայութիւն, աստ-
ւածաբանութիւն, ճարտասանութիւն... ուսումնասիրել է
հայոց Մ. Բ. դարու փիլիսոփայ Դաւիթ Անյաղթի գըր-
ւածքները, վրացի փիլիսոփայ Յովհաննէս Պատրիկի մի-
ջոցով:

Վրաստանի հին և նոր պատմագիրները վկայութեամբ
Թամար թագուհու ժամանակները վրացոց համար եղել է
ոսկե դար, այսինքն տէրութիւնը հաստատ հիւքերի վրայ
էր գրւած. թաւադազնաւորները (իշխան-ազնւականներ)
ոտի կանգնած թշնամիների վրայ ահ էին ազդում, շին-
ւում էին բերդեր, աշտարակներ, վանքեր, կուսանոցներ,
պալատներ և այլ հաստատութիւններ. ծաղկում էր և
գրականութիւնը ¹⁾: Ահա այդ ժամանակներում իբրեւ
արքունական գանձարանի կառավարիչ, որպէս հաստատա-
կամ մարդ՝ նշանակւում է Բուսթաւելին:

Ե՞րբ է գրւած «Ընձենաւորն», ինչ առիթով է գըր-
ւել նա, և ինչ կարեւորութիւն է նա ներկայացրել վրա-
ցոց համար:

Ոմն Չախրուխաձէ, որը 1195 թւականին Թամար
թագուհու գովեստն է գրել, յիշում է նաև Բուսթաւե-
լուն: Պարզ է ուրեմն որ Բուսթաւելին այդ թւականից
առաջ է գրել իւր պոէման. բայց որովհետև ոմն Եովանէ,
որը նոյնպէս Թամարի գովեստն է գրել, բայց արդէն

¹⁾ Վրաց պատմութեան այդ շրջանի համար տես «Մուրճ»
1895 թ. № 11 (նոյեմբեր) «Վրաստանի անցեալը» Ա. Աբա-
խանեանցի:

1188 թ.ին, և Բուսթաւելուն չի յիշում, դորանից եղ-
րակացնում են, որ պոէման պիտի գրւած լինի այդ երկու
թւականների միջև, այն է 1188—1195 թ.ին, այսինքն
ուրթ տարւայ միջերքում: Թէ աւանդութիւնը և թէ նոյն
իսկ Բուսթաւելու հետեւալ խօսքերը՝ «Ես արհեստով Բուս-
թաւելի, ձեռնարկել եմ մի այսպիսի բան. ում որ սպա-
ների գունդը հնազանդւում է՝ նրա համար եմ աշխա-
տում, նրա համար եմ մեռած. սիրւելու կարօտ մնալով՝
ոչ մի դեղ չեմ գտնում. նա պիտի տայ ինձ կամ
բժշկութիւն կամ գերեզման», առիթ են տալիս կար-
ծելու, որ նա Թամար թագուհու սիրուց զրդւած է
գրել իւր սիրահարական հրաշալի կտորներով լի պոէման:
Բուսթաւելին իւր գրւածքով նկարագրել է Թամար
թագուհու գեղեցկութիւնը, ողորմածութիւնն և իմաս-
տութիւնը, նոյնպէս և նշանաւոր մարդոց արժանիքը և
զանազան յատկութիւնները. բայց որովհետև ժամանա-
կակից անձնաւորութեանց անունները յականէ անւանէ չէր
կարելի տալ, ուստի պոէմային նա տւեց հեքեաթի ձև.
իսկ գործողութիւնները փոխադրեց Արաբիա:

Ահա և վրաց մէջ պտուղ մի աւանդութիւն, որ
պ. Գէորգ Աստւածատրեանը, լսելով մի վրացի հովիւից,
գետեղել է տաղաչափութեամբ «Աղբււր»-ի 1890 թ. մարտ
№ 3 համարում «Բուսթաւելու սէրը» վերառութեամբ:

Թամար թագուհին խնջոյք է տալիս իր իշխաննե-
րին. ամենքն էլ ուրախ են, որ երկարատև պատերազմնե-
րից յետոյ դարձեալ միմեանց կենդանի են տեսնում: Տխուր
է միայն Շոթան և չի հնչում նրա քնարը: Թամար թա-
գուհին նկատելով նորա դէմքի թախիծը, ասում է.

— Զէ որ ազատ է քո Վրաստանը, ինչո՞ւ ես տխուր:

— Այո՛, ազատ է Վրաստանը, բայց ես գերւած եմ,

պատասխանեց խոր հոգեոց հանելով Բուսթաւելին: Այդ ասելով վերցնում է քնարը և երգում լոյսը սիրող այն թիթեռի մասին, որ մինչև անգամ թռչեր էլ այրում ու վերջը ինքն էլ այն լոյսին զոհ է գնում:

Թամարը նկատելով որ շատ տխուր է հնչում նրա քնարը՝ ասաց.

— Միթէ հնար չկայ քեզ օգնելու:

— Ոչ, մահս մօտ է. ահա այս գրեածքս կարդա և ինձ յիշիր:

Իշխանները խնդրում են որ ինքը կարդայ. նա էլ կարդում է «Ընձենաւորը» պոէման: Ունկնդիրները այնպիսի խորին ուշադրութեամբ էին լսում, որ կարծես թէ պապանձել էին: Թամարն այդ գրեածքի համար առաջարկեց իւր ամբողջ գանձը. այդ բոլորին Բուսթաւելին չոքեց նրա առաջ և հնչեցրեց լարերը, երգելով թէ այն թիթեռը՝ ինքն է, և լոյսը՝ Թամարը: Վերջացնելով ընծայեց նրան իւր գրեածքը: Թամարը կատաղած հրամայեց նրան անյապաղ հեռանալ Վրաստանից, ասելով. «հեծիր շուտ նժոյգներիցս մինը, ապա թէ ոչ՝ դահիճները գլուխդ կը թռցնեն»: Վշտալի ու յուսակտուր Բուսթաւելին անիծում է Թամարին նրա սառնասրտութեան համար, յայտնում է, որ այնուամենայնիւ նա միշտ իրան կը յիշի և նրա աչքերիցը արտասուքը չի հատնիլ: Ջարդ ու փշուր անելով քնարը՝ նա անհետացաւ:

Ստում են քաղաք կամ ամրոց ու պալատ շինելիս Թամարը միշտ յիշում էր Բուսթաւելուն և արցունքներով թրջում հիմքերը:

II

Վրաց պատմագիրները պատմում են, որ երբ Բուսթաւելին «Ընձենաւորը» գրեց, նա արքունական պալատում այնպէս գրաւիչ կերպով կարդաց, որ նրանից լսող շատերը երանի էին տալիս նրա կարդալուն: Նրա ընթերցումն այնպիսի տպաւորութիւն թողեց ամենքի վրայ, որ իւրաքանչիւրը նրանցից աշխատում էր ձեռք բերել այդ գրեածքը ու արտագրել՝ ընդմիշտ տանը ունենալու համար: Մինչև անգամ սկսեցին հարսանիքներում այնտեղից կտորներ երգել: Այդ սովորութիւնը փնացել է մինչև մեր օրերը. այսպէս, օրինակ, պր. Եոսելիանին վերջերքս Դուշէթի դաւառում պատահել է մի հարսանիքում այդ պոէման երգելիս: Նոյնն է նկատւում նոյնպէս մահմեդական վրացոց մէջ (Բաթումի շրջակայքում), ուր շատերը անգիր գիտեն այդ պոէման:

Բայց որովհետև հնումն այնքան թուղթ չէր ճարւում, որ ամենքն էլ արտագրել կարողանային, ուստի ազատ ժամերին հաւաքւում էին ձեռագիրը ունեցողի մօտ և տեղն ու տեղը անգիր անում: Այդպէս էին վարւում աւելի կիրակի օրերը, ուստի հոգեւորականութիւնը վերաբերւում էր թշնամանքով այդ երևոյթին: Հռչակաւոր պօէման վերջ ի վերջոյ այնքան է տարածւում, որ աղջիկ մարդու տալու ժամանակ սովորութիւն է դառնում տալ նրան նաև մի օրինակ «Ընձենաւոր» իբրև օժիտ: Միով բանիւ այդ գրեածքը դարձաւ ժողովրդի սիրտն ու հոգին: Նոքա այնտեղ գտնում էին անձնագոհութեան, նեղեալներին օգնելու գաղափարները, հաւատարմութիւն և իմաստալից առականք. օրինակ՝ 12-րդ դարում մարդիկ կանանց բանի տեղ չէին դնում. Բուսթաւելին, այդ բանը

նկատելով, վարդապետում է՝ առիւծի կորիւնը առիւծ է, էգ լինի թէ արու:

Հին մարդկային կեցութիւնը հիմնւած էր ստրկութեան և ճորտութեան վրայ. Բուսթաւելին հակառակն է քարոզում. «տուր չքաւորներին գանձդ, ճորտերիդ՝ ազատութիւն»:

Բուսթաւելու ժամանակակից մարդիկ կենդանի շունը գերադասում էին մեռած առիւծից. իսկ նա քարոզում է՝ «անւանի մահը գերադասելի է արատաւոր կեանքից»:

Յեղական ծագումը մեծ նշանակութիւն ունէր Բուսթաւելու ժամանակ քան թէ արժանաւորութիւնը. բայց նա, հակառակն էր պնդում. «հազարով ծագումն (ազգ) գնահատեց, տասը հազարով կրթութիւնը. բայց եթէ մարդս ինքը լաւ չէ՝ ոչինչ է նրա յեղական ծագումը»:

Ժողովրդից վարակեցան և քահանաները. իսկ կղերականութիւնը աւելի ևս գրգռեց. բանն այնտեղ հասաւ, որ Քամարին ժամանակակից վրաց Յովհաննէս կաթողիկոսը սկսեց յայտնի կերպով քարոզել ընդդէմ Բուսթաւելու պոէմայի և անիծել նրա ընթերցողներին: Բայց ոչ մի միջոց չէր օգնում նրա տարածմանը առաջն առնելուն. վերջը կաթողիկոսը և ամբողջ հոգևորականութիւնը այն աստիճանի խիստ ամբաստանում են այդ գրածքը Քամար թագուհու առաջ, որ հեղինակին արքունիք են կանչում դատի և իրանց փափազին հասնում. «Ընձենաւորը» հռչակել են տալիս իբրեւ մի անբարոյականացուցիչ գրածք, որ դա ժողովրդին արգելք է լինում նոյն իսկ աստուածաշնորհական պարտիք հատուցանելու և որ այդ գրածքով շոշափում է Քամար թագուհու պատիւը, այսինքն Բուսթաւելին գրել է այդ՝ զրդւած նորա սիրուց. ուստի վճռում են հեղինակին

ապաշխարութեան աքսորել Երուսաղէմի վրաց Ս. Խաչ վանքը:

Եւ իրօք մենք նրան քիչ ժամանակ յետոյ պատահում ենք Երուսաղէմում իբրեւ կղերական ¹⁾:

Բնական է, որ հեղինակին աքսորելուց յետոյ կաշխատէին նրա գրածքները ոչնչացնել. բայց այնուամենայնիւ ժողովուրդը հնարք էր գտնում իւր հոգեհատորը պահպանելու: 1738 թին Տիմոթէոս վրաց արքեպիսկոպոսը Երուսաղէմի Ս. Խաչ վանքում տեսնում է Բուսթաւելու պատկերը և ապա իւր ուղևորութեան նկարագրի մէջ զգանքով յայտնում է, որ նա եղել է անբարոյականացուցիչ բանաստեղծութեան յօրինող և քրիստոնեաներին անբարոյականացնող մի անձն: Ուրեմն նորան ատելիս է եղել վրաց հոգևորականութիւնը նոյն իսկ 18-րդ դարում: Ըստ ասութեան Քէյմուրազ թագաժառանգի, Բուսթաւելին մնաց Երուսաղէմում, վերանորոգեց իւր բնակավայր Ս. Խաչ վանքը և այնտեղ էլ վախճանեց. բայց ո՞ր թւականին—ճիշտ յայտնի չէ:

Սի այսպիսի հանճարեղ գրածքի հեղինակ, որպիսին է «Ընձենաւորը», դրանից առաջ էլ գրութիւններ կ'ունենար և աքսորի մէջ էլ չէր դադարիլ գրել, թէև այդ լինէր կրօնական ուղղութեամբ: Սակայն որ և է այլ գրութեան մասին ոչ մի յիշատակութիւն չի մնացած ²⁾:

¹⁾ 2. Ճիճիւնաձէի ասելով Երուսաղէմում գտնւած Բուսթաւելու պատկերի տակ հին վրացերէն տառերով (խուցուրի, որ նման է հալոց) գրած է Շիօ. Բուսթաւելին նկարած է արեղալի շորերով:

²⁾ Յիշենք սակայն, որ Խախուլի եկեղեցում գտնուող Սբ. Աստուածածնի պատկերի տակ մի անընթեռնելի գրութիւն կայ, որի ներքոյ կարդացում է «գրեց Բուսթաւելին»:

Չնայած, որ Ռուսթաւելու մասին այժմ մի պատկառելի գրականութիւն կայ, բայց մի քանի հարցեր դեռ ևս մնում են չլուծւած:

III

Այս գրածքը իւր վեհ բանաստեղծական զգացմունքով, բարոյական իմաստներով (որոնք վրացոց մէջ առօրեայ առածներ են դարձել) և կեանքի ճշգրիտ պատկերներով գրաւել է ոչ միայն վրացիներին այլ և եւրոպացոց, որոնք կամ ամբողջապէս կամ կտորներով թարգմանել են իրանց լեզուներով:

Այս գրածքը ունեցել է վրացերէնում մի քանի տպագրութիւններ: Մինչ տպագրելը վրացիք, ինչպէս տեսանք, միմեանցից արտագրում էին:

Առաջին անգամ «Ընձենաւորը» տպագրել տւեց Թիֆլիսում Վախտանգ վրաց թագաւորը 1710 թ-ին. դորանից այժմ միայն մի քանի օրինակն է մնացել. այդ տպագրութեան հազւագիւտ լինելու պատճառն այն է, որ Անտոն կաթողիկոսը այրել տւեց նրա գրեթէ բոլոր օրինակները: Այդ է ամենաբնորոշ հրատարակութիւնը: Դորանից առաջ արտագրողները միշտ իրանցից աւելցնում էին. ուստի հարկաւոր էր զտել, մաքրել և իսկականը վերականգնել. այդ կատարեց ինքը Վախտանգ թագաւորը: Նա տպւած է հաստ թղթի վրայ այժմեան № 1 տառերով և բաղկացած է 1584 չորս տողանի տներից:

Մի քանի խօսք պօէմայի արտաքին ձևի մասին: Իւրաքանչիւր տուն բաղկացած է 4 տողից և ամեն մի տող էլ 16 վանկից. իւրաքանչիւր տան չորս տողն էլ վերջանում է նոյն յանգով: Ահա պատկերը առաջին տան առաջին երկու տողի՝

— — — — — | — — — — — | — — — — — || — — — — — | — — — — — | — — — — —
Ահա երկրորդ տունը՝
— — — — — | — — — — — | — — — — — || — — — — — | — — — — — | — — — — —
— — — — — | — — — — — | — — — — — || — — — — — | — — — — — | — — — — —

Յիշելու է նաև որ իւրաքանչիւր տան չորրորդ տողը սխաւում է դա (ֆս եւ շաղկապ) յաւելեալ մասնիկով: Առհասարակ եթէ բարձրաձայն կարդալու լինենք Ռուսթաւելու պօէման, պահպանելով շեշտադրութիւնը, տողերը այնքան ներդաշնակ են, որքան Հոմերոսինը: Հարկ ենք համարում յայտնել նաև հետեւեալը. բովանդակութիւնը պատմելիս չենք հետեւել բնագրի գլուխների դասաւորութեան, այլ մի քանի գլուխներ, նայելով բովանդակութեան, միացրել ենք:

Երկրորդ տպագրութիւնն եղաւ Պետերբուրգում Բրոսսէ, Չուբինով և Փալաւանով վրացագէտների միջոցով 1841-ին 1600 տնով: 24-րդ աւելորդ տունը չի եղել Վախտանգի օրինակում, այլ վերցրած է ուրիշ ձեռագիրներից:

Երրորդը կատարեց վրացագի Չուբինովը 1846-ին առաջին գլխի ռսերէն թարգմանութեամբ:

Չորրորդ անգամ հրատարակեց Չուբինովը բառարանով հանդերձ:

Հինգերորդը կատարեց Թիֆլիսում անյայտ հրատարակիչների ձեռքով, 1867-ին:

Վեցերորդը հրատարակեց 1875 թ-ին Արսէն Կալանդաձէն, ձեռնհաս մարդկանց օգնութեամբ: Իբր օրինակելի հրատարակութիւն՝ սորանից են արտատպութիւններ անում:

Սրանից յետոյ եղան բազմաթիւ էփանագին հրատարակութիւններ Թիֆլիսում, Գոթթայիսում, Փոթիում, Օդուրգէթում: Հայերէն լեզուով լիակատար թարգմանութիւն չի եղել մինչ օրս, բայց թարգմանած է պօէմայի սկիզբը (2 գլուխ) տաղաչափութեամբ և Թիֆլիսի բարբառով. թարգմանողն էր պ. Բաստամեան, տպւել է Վոռնիկ ամսագրում 1862-ին յուլիսի և հոկտեմբերի համարներում Սարգիս ստորագրութեամբ: Բնագրից թարգմանած է ամբողջապէս առաջին և երկրորդ գլուխը. ահա մի քանի տուն որպէս նմուշ:

Ռուսթաւելի

Ըձու մորթի հազած մարդը:

Ասածիս կիսատը:

Մէ անճանանչ ոմքին տեսան

Ջրի ափին նստած լալիս.

Էս աժդահէն թիք էր ննդած,

Ինչպէս առուծ դնջանալիս:

Բռնած ունէր լոխտով սև ձի,

Նաշխուն լոխտով ոսկէ կարած.

Թամքն ու լիւամ, դոշլուզ, լոխտէն

Մարգրիաներով էին շարած:

Լալիս էր նա հեկեկալով,

Մովէն բղխում աչքեր նրա,

Արտըսունքը թոշ էր դրի

Նուր բաց էլած վարդու վրաց:

Լեհերէն լեզուով մի արձակ համառօտութիւն տպեց պ. Կազիմիր Լոպչինսկու յառաջաբանով: (Biblioteka Warszawska լեհական ամսագրում 1863 թ.):

Յունարէնը տպեց վրաց Քէյմուրազ թագաւորը 17-դ դարում. բայց օրինակը չի հասել մեզ:

Պարսկերէն լեզուով թարգմանել են 1725 թ.-ին Պարսկաստանում եղած վրացի ազգասէրները:

Ռուսերէն լեզուով թարգմանեց պ. Գ. Մինամձուարովը արձակ: Այժմ մոագրութիւն կայ նորից թարգմանելու:

Մի քանի կտորներ կան թարգմանած ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն և այլ լեզուներով. վերջերքս պատահեցինք 1888-ին պ. Ստալինսկու հրատարակութեան վրացերէն, ռուսերէն, հայերէն, ֆրանսերէն և գերմաներէն թարգմանած մի քանի կտորներ: (Հայերէնը վերցրած է նոյն Բաստամեանի Թիֆլիսարբառ թարգմանութիւնից Վոռնիկ-ից): Վերջին ամենաշքեղ և պատկերազարդ հրատարակութիւնը պ. Քարթլելովինն է (վրացի) և արժէ 15 ռուբլի: 1895 թ. վրաց Մոամբէ (համբաւաբեր) ամսագրի նոյեմբերի համարում պ. Ալ. Ս. շիլի «Ընձենաւորը» տրամաբանօրէն վերլուծելով գրտնում է շատ կեղծ տներ: Ամենահին ձեռագիրը, որի հետ համեմատում են բոլոր հրատարակութիւնները, 1646 թւականիցն է: Այդ թւականից մինչև 1870 թ. ձեռագիրներում շնորհիւ տրտագրողների սպրդել են 18 տուն, արդ, եթէ երկու հարիւր սարում աւելացրել են 18 տուն, ինչ կարծիք որ 12-րդ դարուց մինչ 1646 թ. ուրեմն 4—5 դարւայ ընթացքումն էլ աւելացած կը լինեն կեղծ տներ:

Համարեա թէ բոլոր հրատարակութիւնների առաջին երեսի վրայ դրւած է Բուսթաւելու պատկերը: Մի քանի խօսք էլ այդ պատկերի մասին:

Բացի Երուսաղէմում եղած պատկերից, բանաստեղծ Վախտանգ Օրբէլիանու մայրը (Հերակլ II-ի քայր, 18-րդ



դար), ունեցել է մի հին ձեռագիր, որին կից է եղել և հեղինակի պատկերը: Այդ պատկերը պ. Պլատոն Ետեկիանին տւել է Կովկասի նախկին փոխարքայ իշխ. Սիմէոն Վորոնցովին. իսկ սա իր կողմից յանձնել է մի Ֆրանսիացի ճանապարհորդ Ֆլերին, որ սա տպել տալ Պարիզում: Նա իրաւ տպել է տւել և մի քանի օրինակ ուղարկել Վրաստան. այժմս էլ կայ այդ օրինակներից. ահա այդ վերջիններից են ընդօրինակւած մնացած բոլոր պատկերները: Բուսթաւելին նկարւած է պարսկական տարազով, ծնկան վրայ «Ընձենաւորը» գրելիս:

Ինչն է արդեօք աղբիւր ծառայել Բուսթաւելուն իւր «Ընձենաւորին» համար:

Հեղինակը ինքն իր յառաջաբանում ի միջի այլոց գրում է.

«Այս պատմութիւնը պարսկերէն է և վրացերէն թարգմանած: Սրանից կարելի էր եզրակացնել, որ արդէն վրացերէն արձակ թարգմանութիւն եղել է պարսկերէնից. իսկ Բուսթաւելին տաղաչափութեան է վերածել: Հիմնւելով այդ խօսքերի վրայ՝ Վախտանգ թագաւորը (18-րդ դարում) ասում է. «շատ ման եկանք, բայց պարսկերէնի օրինակը չգտանք»:

Մի տեղ միայն հեղինակը իրան մատնում է և ապացոյց տալիս, որ պօէման Վրաստանի կեանքիցն է վերցրած և փոխաբերական մոքով գրած: Այդ այն տեղն է, ուր Աթանդիլը, երկրորդ տեսութեան ժամանակ Թինաթինի հետ, խնդրում է ի յիշատակ իր հրաժեշտի իրան մի իր ընծայի. ահա այդտեղ Բուսթաւելին ասում է, որ «Աթանդիլը խօսում էր քաղցրահնչիւն վրացերէն լեզուով»: Նատերը կարծում են, և այդ հաւանական է, որ Բուսթաւելին զիմել է այդ միջոցին, որպէս զի ժամա-

նակակիցներին մի կերպ միամտեցնի, որ նրանք կարծիք չտանեն թէ գրւած է զէպի Թամար թագուհին տոժած սիրուց, որին նա հոգով սրտով պաշտում էր: Այդ սիրոյ մասին հեղինակը յառաջաբանում չիշատակում է, ասելով. «Սկսենք գովել Թամարին արեան արցունքներ թափելով. թանաքի տեղ մեզ կը ծառայի սև սաթէ նման լինը, և որպէս գրիչ՝ նրա ձկուն իրանը. իսկ լսողի սրտին թող ցցւի նետը»: Որ սա այլաբանութեամբ է գրւած և իսկապէս Բուսթաւելու հեղինակութիւն և ոչ թէ պարսկերէնից թարգմանած և ապա տաղաչափութեան վերածած, դորան իբրև ապացոյց կարելի է բերել նախ հերոսների անունները, որ զուտ վրացական են և գործածական էին այդ պօէմայից աւելի առաջ. օրինակ Թինաթին, որ հերոսուհիներից մինն է, եղել է վրաց Կախէթիայի թագուհի. երկրորդ, հերոս թագաւորների շքախումբը կազմում են թաւադներ (վրացերէն իշխան) և ղիղերուլներ (վրացերէն մեծաւորներ). երրորդ, նազարանները և խաղերը պօէմայում վրացերէն անուններ են կրում. չորրորդ, երգելու ժամանակ հերոսները վրացոց ձևով են երգւում, օր. Աթանդիլը ասում է. «Իմ արև, Թինաթինի արևը վկայ». և հինգերորդ, մի տեղ էլ յիշւում է որ զանգեր էին խփում (այսինքն եկեղեցու զանգերը):

Այդ պօէմայում կան նաև արաբական բառեր, ինչպէս օրինակ Նաւրուզ (մուսուլմանների նոր տարի), Մուսապի (Պորան). այնպէս որ պ. Ն. Գուլակը «Ընձենաւորը» բաժանում է երկուսի. առաջին բաժին, ուր գործողութիւնը կատարւում է Բոստանի թագաւորութեան մէջ, զուտ վիրական է այլաբանութեամբ գրւած, (բնութիւն, մարդիկ և սովորոյթներ). և երկրորդ բաժին, որ արկած-

ներին է վերաբերում, կարելի է որ վերցրած լինի պարսկերէնից:

Ռուսթաւելին նկարագրւած է շատ նւազած դէմքով և քնքոյշ հայեացքով:

1893-ին Վլադիմիր վրացերէն պատկերազարդ շաբաթաթերթի խմբագրութիւնը բացեց Ռուսթաւելուն արձան կանգնեցնելու համար հանդանակութիւն, թէև զեռ չի որոշւած թէ ուր պիտի կանգնեցնեն:

Ռուսթաւելու և նրա կնոջ մասին պահպանւած է հետեւեալ աւանդութիւնը:

Ըստ աւանդութեան Ռուսթաւելին եղել է զեղեցիկ, քաջ, մենամարտող և զիտուն մարդ. կրնն էլ նոյնպէս նշանաւոր տոհմից մի զեղանի աղջիկ է եղել. վերջնոյս եղբայրը Ռուսթաւելու հասակակից ընկերն էր: Շոթա Ռուսթաւելին ունեցել է մի արաբ ստրուկ Աբդըլլա անունով:

Մի կիրակի օր թամար թագուհին հրաւերք սարքեց իր պալատում և, ի միջի այլ մատենադիրների և զիտնական անձերի, հրաւիրեց նաև «Ընձենաւորի» հեղինակին: Թամարի խնդրանքը վերջինս սկսեց կարդալ «Ընձենաւորը»: Ամենքը խորը զգացւեցին. Թամար թագուհին ի նշան խորին շնորհակալութեան հանեց մատից իր մատանին և շնորհեց Ռուսթաւելուն: Խնջոյքի ժամանակ էլ Թամարն էր առաջինը Ռուսթաւելու կենաց խմորը:

Այդպիսի ուրախ արամադրութեան ներքոյ էր Շոթան, երբ ծառաներից մինը մտաւ և յայտնեց, որ կանչում են նրան: Ռուսթաւելին դուրս գնալով նկատեց մի զեղեցիկ գրահաւորւած երիտասարդ ձիաւոր: Այդ երիտասարդը մօտեցաւ Ռուսթաւելուն և ասաց.

— Դու այստեղ ես քէֆ անում. իսկ կինդ՝ ուրիշի հետ:

Ռուսթաւելին ընկաւ մտածման մէջ և չէր իմանում ի՞նչ անէր. նա չկարողացաւ ճանաչել համբաւաբերին, ուստի բացատրութիւն պահանջեց:

— Հետեւի ինձ և կ'իմանաս ի՞նչ եմ ասում: Շոթան մնաս բարև ասելով պալատականներին և հիւրերին, հետեւեց անծանօթին: Վերջինս Ռուսթաւելուն տարաւ նրա տուն և ասաց.

— Տես ի՞նչ է կատարւում և լսիր ի՞նչ որ խօսւում է:

Ռուսթաւելին ակամայ նայեց և տեսաւ... իրանց ստրուկ Աբդըլլային իր կնոջ հետ պառկած... Ռուսթաւելու արիւնը պղտորեց և չէր կամենում իր լսածին ու տեսածին հաւատալ: Նա ճետ նայեց, բայց երիտասարդին այլ ևս չգտաւ, ուստի շուտ եկաւ և քայլերն ուղղեց դէպի դաշտ. ճանապարհին նա մտածում էր.

«Միթէ ամբողջ Վրաստանում հոչակ վայելող մարդուց նա գերազանց մի սև արաբ ստրկին. միթէ ինքը չէր պատճառը, որ ես խաբեցի ինձ համար մեռնող օրիորդին. երանի թէ անծանօթը ինձ ցոյց չտար այս բոլորը: Այսպիսի մտածմունքների մէջ ընկղմած նա քաղաքից դուրս պատահեց անծանօթին. վերջինս ասաց.

— Շոթա, ի՞նչպէս ես հաւանում կ'նոջդ:

Այս խօսքերի վրայ Ռուսթաւելին վառեց որպէս բոց, հանեց դաշոյնը, խրեց երիտասարդի կուրծքը, ասելով.

— Դու ես այս ամենի պատճառը:

— Սիրելի Շոթա, ասաց կիսամեռ երիտասարդը, երանի էի տալիս ոտներիդ տակ մեռնելու, և Աստուած խնդիրքս չմերժեց:

Խեղճի լեզուն փորն ընկաւ բռնելով Ռուսթաւելու

Ճնկներին: Բուսթաւելին, լսելով ծանօթ ձայնը, վրայ ընկաւ, բաց արեց նրա կուրծքը և ապշած յետ կանգնեց... Նա սպանեց իր նախկին նշանածին: Շոթան նշմարեց նրա մատին իր տւած մատանին: Գրկեց աղջկան ու այլ ևս տեղիցը չէր շարժուում, կարծես թէ ասում էր— սրանից յետոյ լաւ է մեռնել քան թէ ապրել:

Աղջկան սպանելուց յետոյ մի անգամ մեր հերոսը խնձոյքի հրաւիրեց Թամար թագուհուն և այլ մեծամեծներին: Խնձոյքից յետոյ ամենքն էլ դուրս գնացին մի մեծ հրապարակ, ձիարշաւ սարքեցին, ուր միշտ ջաղթանակը Բուսթաւելին էր տանում: Վերջը Բուսթաւելին դարձաւ Թամարին, ասելով.

— Պէտքական եմ, բան արժեք թէ չէ:

Քո հատը չունիմ ամբողջ Վրաստանում. պատասխանեց Թամար թագուհին:

— Դէմքի գծագրութեամբ, կամ խելքով, բնաւորութեամբ ու վարք ու բարքով ուրիշից խօս պակաս չեմ:

— Ո՛չ, միաբերան կանչեցին ամենքը. քո ամեն բանն էլ գովելի է:

— Ուրեմն եթէ ինձ նման մարդու կինը անհաւատարիմ գտնւի դէպի իր ամուսինը և նրան մի տրաքի հետ փոխի, այդ տեսակ կնոջը ի՞նչ պէտք է անել:

Բուսթաւելու կինը և աներոջ որդին սաստիկ կարմրեցին:

— Անմիջապէս պիտի բաժանուել և ուրիշի հետ պսակուել, հրամայեց թագուհին:

— Իսկ եթէ մարդը սպանել է իր կնոջ անհաւատարմութիւնը ցոյց տւած անձին, նրան ի՞նչ անել:

— Սպանողը պէտք է ապաշխարի. պատասխանեց թագուհին:

— Սպանողը ես եմ և ինձ անհաւատարիմը իմ կինն է:

Այս ասելով նա ձին հեծաւ ու անյայտացաւ և, ըստ աւանդութեան, գնաց Երուսաղէմ ճգնելու:

Բուսթաւելու աներձագը չէր ուզում հաւատալ այս բոլորին, ուստի հետամուտ եղաւ իր քրոջը: Մի անգամ իրօք նա պատահեց քրոջը արաբի հետ նոյն անկողնում և լսեց հետեւեալը.

— Ո՛չ, ես քեզանից չեմ բաժանուել, եթէ դու մինչև անգամ իջնես դժոխք, ասում էր կինը:

Նղբայրը թուցրեց արաբի գլուխը սրով և, կախելով քրոջ պարանոցից, ասաց. չէիր կամենում դրանից բաժանուել, ահա յաւիտեան ման ածա հետդ:

Ինչպէս պատմութիւնից ընթերցողն էլ կ'եզրափակի, Աւթանդիլի տիպը զուտ արեւելեան քրիստոնէական ասպետի տիպն է, որ յետ չի մնում արեւմտեան Ռոլանդներին և Տանկրէդներին. իսկ Տարիէլի տիպը՝ մահմեդական վալդենի ասիացու, որ չնայած քաջութեան՝ անսանձ է իւր կրքերում. իսկ հերոսուհիներից Նեստանը զուտ հարեմական տիպ է. նա միշտ փակ է և միշտ կրաւորական դեր է խաղում: Թինաթինը, ընդհակառակը, ազատ գործում է, դատողութիւններ է տալիս, հաւատարիմ է սիրոյն և համարեա թէ եւրոպական կնոջ տիպ է ներկայացնում:

Այս տեղեկութիւնների համար մեզ աղբիւր ծառայել են.

1) Շոթա Բուսթաւելու «Ընձենաւորը» 1887-ի (վեցերորդ բարեփոխած տպագրութիւն) հրատար. Թաւարթ-Քիլիձէի, Ողուրդէթ, և 1893-ի հրատարակութիւնները:

2) Զ. Մթածմինդեիի «Շոթա Ռուսթաւելի» վրացերէն բրոշիւրը, ուր կենսագրական և մատենախօսական տեղեկութիւններ կան:


3) Անտօն Փուրցիւսձէի «Ռուսթաւելի և նրա կիներ» Աւանդութիւն:

4) Ն. Գուլակի «О барсовой кожѣ Руставели» դասախօսութիւններ, տպած 1884 թւին:

5) Գ. Եօսելիանիի «Ընձենաւորը» պատմածքը: Այս վերջին վրացերէն գրածքը մեր ձեռքն ընկաւ, երբ սոյն աշխատութիւնը արդէն պատրաստ էր. զանց չենք առել սակայն մեր այս գրութիւնը համեմատել այդ գրածքի հետ:

Յ. Միրիմանեանց:

Բնականաւորը եւ իր ընկերները



Ընձենաւորը եւ իր ընկերները

ԸՆԶԵՆԱԽՈՐԸ

Ա.

ԱՐԱԲԻԱՅԻ ՐՈՍՏԵԻԱՆ ԹԱԳԱԽՈՐԻ ՄԱՍԻՆ



րաբխայում երբեմն ապրում էր Րոստեան անունով մի բարի և ողորմած թագաւոր. նա ունէր մի անտես-աննման աղջիկ՝ Թինաթին անունով:

Թագաւորը իր կեանքի վերջին օրերում կանչեց իր բոլոր նախարարներին և յայտնեց՝ թէ թագաւորութիւնը իր ծերութեան պատճառով յանձնում է Թինաթինին: Նախարարները շատ տխրեցին, երբ իմացան իրենց սիրելի տիրոջ մտադրութիւնը. նրանք ասում էին Րոստեանին. «Տէր արքայ, քո տւած վատ խորհուրդը լաւ է ուրիշի լաւիցը»:

Բայց Րոստեանը չետ չկանգնեց իր մտքից և Թինաթինին յայտարարեց գահակալ:

Այդ հրամանը ամենից շատ ուրախացրեց ամիր սպասալարի որդի Աւթանդիլին, որովհետեւ սա սիրահարւած լինելով Թինաթինի վրայ՝ առիթ կ'ունենար նրանից չետոյ ստէպ-ստէպ տեսնելու իր հոգեհատոր գահակալ սիրուհուն: Աւթանդիլը Րոստեան թագաւորի որդեգիրն էր և սիրւած էր նրանից, ինչպէս հարազատ որդի: Արաբխայում նրա նման գեղեցիկ և քաջ տղամարդ հազիւ թէ

գտնւէր. նա զօրքի ընդհանուր-հրամանատար էր. նշանակւած: Թագաւորի հրամանից յետոյ արաբական բոլոր իշխանները, զօրապետները և զօրքը եկան շնորհաւորելու Թինաթինի գահակալութիւնը: Բոստեան թագաւորը նրանց ներկայութեամբ իր թագը դրեց Թինաթինի գլխին և հռչակեց նրան թագուհի:

Թինաթինը իրան արժանի չէր համարում հօր զահը նստելու. ուստի լռիկ լալիս էր: Հայրը նկատելով իր աղջըկայ արտասուքը՝ խրախուսեց նրան և ասաց. «Կառավարիր ժողովուրդդ աղնութեամբ. կերուխումի ետեւից մի ընկնիլ, նրանից օգուտ չկայ. ինչ որ ողորմութիւն տալու լինես, իմացիր, որ միայն այդ տւածն է քոնը. մնացած բարիքդ կորած է. և, ինչպէս արեւը միակերպ տաքացնում է թէ վարդը և թէ աղբը, դու էլ այնպէս, դստրիկս, հաւասարապէս դատիր և խղճն մեծ ու փոքրին»:

Այդ խրատից սիրտ առած, Թինաթինը բացեց զանձարանը և առատութեամբ սկսեց փող բաժանել հպատակներին, իսկ յետոյ սարքեց մի արքայաժայել խնճոցք: Խնճոցքի ժամանակ ամենքն էլ նկատեցին, որ Բոստեան թագաւորը սաստիկ տխուր է: Աւթանդիլը և աւագ-վեզիր Սոկրասը կամենում էին իմանալ այդ տխրութեան պատճառը և մի կերպ ուրախացնել թագաւորին: Սրանք լըցնելով հազար փնշէները, մօտեցան թագաւորին, չոգեցին նրա առաջ և հեղնօրէն ասացին.

— Ինչու ես տխրել, տէր, երեւի թագուհու առատաձեռնութիւնն է ձեր տխրութեան պատճառը. տէր արքայ, մի՞թէ նա քո ընտրածը չէ, մի՞թէ քո խորհրդով չի կառավարում: Վերջը Աւթանդիլն առանձնապէս աւելցրեց. «Տէր, թոյլ տուր ծառայիդ մի երկու խօսք ասե-

լու, — խնճոցքից յետոյ արի մրցենք նետաձգութեան մէջ բոլոր զօրքերի ներկայութեամբ»:

Թագաւորը լսելով այդ՝ ժպտաց և ուրախ-ուրախ հրամայեց պատրաստել անտառում նետաձգութեան տեղը և նետաղեղները: Փառաւոր հանդիսով ամենքը դուրս գնացին անտառը մրցման ներկայ լինելու ու զւարճանալու: Մրցումից յետոյ բոլոր զօրքերը վկայեցին, որ Աւթանդիլի նետերից ոչ մէկն էլ չվրիպեց և նրա սպանած որսերի թիւը աւելի շատ է, քան թագաւորինը: Թագաւորը չաղթւած էր:

Բոստեանի երեսից թախիժն անցաւ: Նրա տխրութեան պատճառը նետաձգութեան, գնդակի և այլ խաղերի մէջ իր նմանը չունենալն էր. իսկ այժմ թագաւորը ուրախացաւ, որովհետեւ Աւթանդիլը խաղերի մէջ բռնեց նրա տեղը:

Բ.

ԲՈՍՏԵՒԱՆԸ ՏԵՍՆՈՒՄ Է ԸՆԶԵՆԱԻՈՐԻՆ



յդ խաղից յետոյ Բոստեանն և Աւթանդիլը տեսան ջրի ափին նստած մի երիտասարդ, որ հագած ունէր ընձու ¹⁾ մորթուց վերարկու և գլխակի, ձեռին բռնած բազուկի հաստութեամբ մի մորակ: Նա լալիս էր աղիոգորմ ձայնով: Թագաւորը խոյն ուղարկեց իր ծառաներից մի քանիսին իմանալու այդ երիտասարդի ով լինիլը և լալու պատճառը: Ընձենաւորը նրանց վրայ խփի ուշադրութիւն էլ չդարձրեց. նա շարունակում էր

¹⁾ Ինձը — վագրին ցեղակից մի կենդանի է:

աղի արցունքներ թափել: Մառաները վերադարձան թագաւորի մօտ և յայտնեցին, որ ընձենաւորը նրանց ոչ մի հարցին չպատասխանեց և իրանց վրայ էլ չնայեց: Բոստեանն աւելի հետաքրքրեց և այս անգամ տասներկու սպառազինւած ծառայ ուղարկեց՝ պատուիրելով հանդերձ հակառակ դէպքում բռնել նրան և բերել իր մօտ:

Ընձենաւորը տեսնելով նրանց, արտասուքը սրբեց և վայ կանչելով սուրը հանեց, յարձակեց նրանց վրայ ու բոլորին կոտորեց մի հարւածով: Բոստեանն և Աւթանդիլը այդ նկատելով, շուտափոյթ առաջ գնացին. բայց մինչև սրանց հասնելը, ընձենաւորը հեծաւ իր սև ձին և անհետացաւ: Թագաւորը չիմանալով թէ ով էր այն մարդը, ինչու էր լալիս կամ ինչ էր ուզում, սաստիկ տխրեց: Նա առանձնացաւ բոլորովին և ընկաւ խոր մտածմունքի մէջ: Նա ոչ ոքին չէր ընդունում իր մօտ, բացի թագուհուց և Աւթանդիլից: Մի անգամ Թինաթինը հարցրեց հօրը նրա տխրութեան պատճառը: Բոստեանը համբուրելով իր աղջկան պատմեց պատճառը: Թինաթինն ասաց.

— Հայրիկ, եթէ ընձենաւորը մարդ էր՝ ուրեմն հնարք կայ գտնելու նրան, հարկաւոր է միայն մարդիկ ուղարկել որոնելու. իսկ եթէ նա մի երևոյթ էր կամ սատանայ, չարժէ այդքան տխրել, որովհետև նա, երևի, կամեցել է քո ուրախութիւնը խանդարել:

Բոստեանն ընդունելով զստեր խորհուրդը, ամեն կողմ խնդրակներ ուղարկեց գտնելու ընձենաւորին, բայց ոչ մի տեղից նոյն իսկ լուր էլ չկարողացան բերել նրա մասին: Մեր թագաւորը դրանով բաւականացաւ և մոռացութեան տուց:

Քիչ ժամանակից յետոյ թագուհին կանչեց Աւթանդիլին իր մօտ և ասաց.

— Քաջ գիտեմ, որ դու ինձ սիրում ես. իմացիր ուրեմն, որ ես էլ նոյնչափ սիրում եմ քեզ. իսկ եթէ դու գտնես այն անյայտ մարդուն և իմանաս նրա պատմութիւնը՝ ազնիւ խօսք, որ ես ընդմիշտ քոնը կը լինեմ. գնա, քեզ երեք տարի ժամանակ. Աստած բարի ծանապարհ տայ...

Աւթանդիլը, լսելով այդ բոլորը, ուրախութիւնից ոտի վրայ չէր կարողանում կանգնել, ուստի շուտով մնաս բարեւ ասելով դուրս փախաւ և ուղղակի գնաց իր հաւատարիմ ծառայ Շերմադինի մօտ: Նա նրան յանձնեց ամբողջ զօրքը և մի նամակ էլ թողեց իր ստորագրեալների անունով, որով նրանց հրամայում էր հաւատարմութեամբ ծառայել Շերմադինին, թէ տանը և թէ պատերազմում. իսկ Բոստեանին յայտնեց, որ իբր թէ գնում է թշնամիներին իմաց տալու Թինաթինի գահակալութեան մասին: Թագաւորը համբուրելով արձակեց նրան:

9.

ԱԻԹԱՆԴԻԼԸ ՈՐՈՆՈՒՄ Է ԸՆՁԵՆԱՎՈՐԻՆ



Աւթանդիլը «Ընձենաւորին» գտնելու համար, էլ սար ու ձոր, գիւղ ու քաղաք ու տեղ չթողեց երկնքի տակին, որ չորոնէր. բայց նա կարծես թէ չբացել էր աշխարհի երեսից: Ընձենաւորը չկար ու չկար: Անցել էր երկու տարի և իննը ամիս: Աւթանդիլը խոցւած և վշտաբեկ սրտով մտածում էր. «Երևի մերոնք ինձ արդէն մեռեալների կարգն են դասել և սուգ կատարել ինձ վրայ. ինչ երեսով այժմ տուն դառնամ և ինչ պատասխան տամ սիրուհուս: Այս տեսակ մտածմունքների մէջ

ընկղմւած՝ նա կանգնեց և զգաց, որ ինքը վաղուց անթի է: Նա իսկոյն սպանեց նետով մի երէ, հրահան ու կաջքարով կրակ արեց և նստեց ճաշելու. նոյնպէս էլ մօտը կապեց կանաչ խոտում: Այն ձորում, ուր Աւթանդիլը ճաշում էր, երեւցան երկու միջուկաւոր մարդ. դրանք ձեռքերի վրայ բերում էին մի վիրաւորւած պատանի: Երբ սրանք մօտեցան, Աւթանդիլը հարցրեց. «Ո՞վ էք»՝ և պատասխանեց կաշիւ նրանց հետ, կարծելով թէ նրանք աւագակներ են: Նրանք պատասխանեցին. «Ողնիք, թէ կարող ես. մենք երեքս էլ եղբայրներ ենք. այսօր դուրս եկանք դաշտն ու անտառը որսի և մի փոքր զարձանալու: Որսը վերջացնելուց յետոյ մենք զինւորներին ճանապարհ գցեցինք ու սկսեցինք մրցել իրար հետ զանազան խաղերում. այդ միջոցին մենք տեսանք ընծու մորթի հագած մի ձիաւոր: Գրաւելով նրա գեղեցկութիւնից, մենք փորձեցինք բռնել նրան. իսկ նա, հարւածելով, գետնովը տեց այս փոքրին և իր լացնալինդ մօրակով ճեղքեց սրա գլուխը այնպէս, որ խեղճի գլխակաշին մաշկեց, և ապա սլացաւ, ահա դէպի այն կողմ: Այդ ասելով նրանք մատնացոյց արին ընծենաւորի արշաւած ճանապարհը:

Աւթանդիլը, որդեկորոյս մօր նման, ուրախութիւնից արցունքներ թափելով, ասաց.

— Ինչպէս Աստուած ինձ հասցրեց իմ նպատակին, այնպէս էլ թող նա ձեր եղբոր առողջութիւն պարգևի:

Այս ասելով նա իսկոյն մարսկեց ձիուն և սլացաւ դէպի այն կողմը, ուր անցաւ տացել էր ընծենաւորը: Աւթանդիլը վերջ ի վերջոյ հասաւ մի քարայր, այդտեղ իջաւ իր ձիուց, բարձրացաւ ծառի վրայ և թաք կացաւ նրա ճիւղերի մէջ: Ահա երեւաց և ընծենաւորը: Լսելով նրա ձիու դոփիւնը, քարայրից դուրս եկաւ մի աղջիկ,

տաւ ձին ու տարաւ ախոռատուն: Միւս օրը լուսանալուն պէս ընծենաւորը հեծաւ ձին ու անհետացաւ: Աւթանդիլը, որ ամբողջ գիշերը ծառի վրայ մնաց, նկատելով նրա հեռանալը մտածեց.

— Այժմ ժամանակ է մոնելու այս աղջկայ մօտ և իմանալու այն զարմանալի մարդու պատմութիւնը:

Այս ասելով՝ իջաւ ծառից: Աղջիկը նրան տեսնելուն պէս վախեցաւ: Աւթանդիլն ասաց.

— Մի վախենալ, ես մի հասարակ հողեղէն եմ, խնդրում եմ, իսէրն Աստուծոյ, ասան ինձ՝ ո՞վ է այն ձիաւորը, որ այս բոպէիս հեռացաւ այստեղից: Աղջիկը պատասխանեց.

— Եթէ քաջ ես, հեռացիր, իսկ եթէ մարդ ես՝ հարիւր անգամ էլ, որ խնդրես այն մարդու պատմութիւնը, ես «ոչ» պիտի պատասխանեմ:

Աւթանդիլը՝ տեսնելով, որ խնդրելով ոչինչ չի լինում և իր յոյսերը ջախջախւում են, մահ սպառնաց աղջկան: Աղջիկը սառնասրտութեամբ նկատեց.

— Սպանիր, եղբայր, բարութիւն արած կը լինես. վաղուց է տանջւում եմ և սպասում մահւանս հրեշտակին, բայց տարաբաղդաբար նա չկայ:

Յուսակաւոր Աւթանդիլը այդ խօսքերից սկսեց երեսի նման հեկեկալ և ասել՝ թէ ի՞նչն է սախում իրան այդպէս անելու, ո՞վ է իրան ուղարկել, և ի՞նչու համար է այսքան թափառում ու դեղերում: Աղջկայ գութը շարժեց լսելով նրա պատմութիւնը, որովհետեւ հասանման դէպքերը կաշկանդել էին և ընծենաւորին: Նա Աւթանդիլին խոստացաւ բանը այնպէս յարմարեցնել, որ ինքը ընծենաւորը անձամբ պատմի իր գլխի անցածը և ո՞վ լինելը:

— Սիրահարին զազանն էլ խղճում է, վերջացրեց Ասմաթը (այսպէս էր այն աղջկայ անունը): Ասմաթը, Աւթանդիլին (ուշտ կերակրելուց յետոյ, թաքկացրեց նրան քարայրում):

Դեռ նա տուն չէր մտել, ահա լսեց ընձենաւորի ձիու դոփիւնը: Դուրս եկաւ Ասմաթը և հարցրեց նրան յետ դառնալու պատճառը: Տարիէլը (այսպէս էր կոչւում ընձենաւորը) պատասխանեց.

— Պատահեցի մի թագաւորի որս անելիս, մարդկանց կերպարանք տեսնելը ցաւ պատճառեց ինձ և դրա համար էլ վերադարձայ:

— Զարմանալի բան է, վայրենիների հետ մանգալը քեզ դուր է գալիս, իսկ մարդկանց կերպարանքից խորշում ես և օրըստօրէ մաշւում ու հիւժւում: Եւմ կարող ծածկել քեզնից, մեզ մօտ մի հողեղէն կայ, յուռով եմ, որ փնաս չես տալ նրան և սիրով կ'ընդունես, պատասխանեց Ասմաթը:

— Յոյց տուր, ուր է, ոչինչ չեմ անի, կը պատմեմ անցածս և պատմել կ'տամ իր մասին, կարելի է դրանով մի կերպ թեթեւանան վշտերս: Ասմաթը դուրս բերելով քարայրից Աւթանդիլին՝ բերեց նրան Տարիէլի մօտ: Տարիէլն և Աւթանդիլը գրկախառնւեցան հարազատ եղբայրների նման և սկսեցին լալ: Աւթանդիլը մի առ մի պատմեց իր ով լինելը, թափառելու նպատակն և այլն: Տարիէլը լսելով այդ բոլորը, ասաց.

— Դու նախ կատարել ես տիրոջը կամքը սրբութեամբ և ինձ դուրս և երկրորդ, քանի որ դու ինքդ էլ նոյն բովի մէջն ես խորովւում ինչպէս և ես, ուստի լսիր պատմութիւնս: Իսկ դու, Ասմաթ, բեր մի ամանով ջուր և քիչ քիչ ածա եռացող սրտիս վրայ. և հոգոց հանելով ընձենաւորը (Տարիէլ) սկսեց պատմել հետեւեալը:

Դ.

ԸՆԶԵՆԱՒՈՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



նդկաստանը բաղկացած էր եօթ թագաւորութիւնից, որոնցից վեցը Փարսադան հզօր թագաւորի էր պատկանում, իսկ եօթներորդը իմ հօր՝ Սարիդոնին: Հայրս Տերութեան պատճառով չէր կարողանում կառավարել մեր երկիրը. ուստի զեսպաններ ուղարկեց Փարսադանի մօտ և իր թագաւորութիւնն յանձնեց նրան: Նա շատ սիրով ընդունեց մեզ և հօրս նշանակեց ամիրբար, այսինքն՝ իրանից յետոյ երկրորդը և Հնդկաստանի զօրքերի ընդհանուր հրամանատար, այն է՝ ամիր-սպասաւար: Փարսադանը ժառանգ չունէր, ուստի երբ ես ծնւում եմ, շատ է ուրախանում և ինձ որդեգրում է: Դեռ հինգ տարիս չլրացած իմ խնամակալս ունենում է մի աննման գեղեցկատեսիլ դուստր: Ինչպէս լոյսը խաւարից գեղեցիկ է ու սիրուն, այնպէս էլ Նեստան-Գարեջանը (այսպէս էր կոչւում նորածինը) առնից չքնաղն ու գեղեցիկն էր. սրան կարող է վկայել նաև Ասմաթը: Երկար ուրախութիւններից և խրախճանքներից յետոյ ժողովրդին բաժանեցին ահագին քանակութեամբ ոսկի և արծաթ:

Ինձ և նրան, քրոջ և եղբօր պէս միասին էին կրթութում: Երբ լուսնանման արքայադուստրը եօթ տարեկան դարձաւ, Փարսադան թագաւորը նրա համար կառուցել տեց մի գեղեցիկ աշտարակ իր բուրաստաններով և մինարէթներով ու մեզ անջատեց միմեանցից: Նեստան-Գարեջանի կրթութեան ղեկը անցաւ նրա հօրաքոյր այրի Դաւարի ձեռքը: Սրան մարդու էին տեսել Քաջաստանում, որտեղ և այրիացել էր: Տասնհինգ տարին լրանալուն պէս

վախճանեց հայրս. նրա մահը ինձ ամբողջ մի տարի սաստիկ վիշտ պատճառեց. օր ու գիշեր լալիս էի: Դաւարը բաւականին զարգացած և իմաստուն կին էր: Այս Ամաթին էլ նշանակեցին անտեսանման Դարեջանի համար նախընտրելու: Տասներկու տարեկանից սկսած ես նետաձգութեան և զննականարութեան մէջ մրցող չունէի:

Երբ լրացաւ սգիս տարին, Փարսադան թագաւորը մարդ ուղարկեց մօտս յայտնելու. «Բաւական է որդի, որքան ողբացիր, եկ և ստանձնիր հօրդ պաշտօնը»: Ես համաձայնեցի:

Մի անգամ ինձ Փարսադան թագաւորը որսի հրաւիրեց: Վերադարձին թագաւորն ասաց. «Գնանք աղջկաս տեսնենք և երէ տանենք նրա համար»: Ես սրահում սպասեցի: Այդ սրահը կատարեալ դրախտի նման էր: Ծառերի միջին երզում, ճախրում էին սիրուն թռչունները: Պարտէզը պատած էր արմաւենիներով, նրա միջին շինած էր մի հիանալի վարդաշրի բաղնիս: Երբ Ամաթը թագաւորի հրամանով եկաւ, երէն ներս տարաւ, վարագոյրը յետ քաշելիս ես տեսայ նետաձգին և ուշաթափեցի: Ուշքի գալով ինձ գտայ ննջարանումս. գլխիս մօտ նստած էին թագաւորն ու թագուհին: Երբ մի քիչ կազդուրւեցի, ծառաները յայտնեցին թագաւորին իմ առողջութեանս մասին: Նա ուրախութիւնից գլխաբաց վազեց մօտս և ինձ տարաւ զբօսանքի. ապա սարքեց խրախճան ու առատութեամբ զանա՛ բաժանեց որբերին և այրիներին:

Նետաձգ-Դարեջանը ուշաթափելիս նկատել էր և, որովհետեւ առաջուց էլ սիրահարւած է եղել վրաս, ուստի աւելի ևս բորբոքւում է նրա սէրը. նա բաց առ բաց չէր կարող իր սէրը յայտնել, ուստի խոստովանում է Ամաթի մօտ և ահա խնճոյքին ծառան յայտնում է ինձ,

որ մի ինչ որ աղախին կանչում է ինձ: Ես իսկոյն դուրս գնացի և տեսայ, որ Ամաթն էր. նա ինձ մի նամակ յանձնեց. այդ նամակում աննմանս գրում էր.

«Արիացիր, մի վհատւիր, ես քոն եմ, եթէ չմեռայ. դէպի ինձ տաճած սէրդ այն ժամանակ կարող ես ցոյց տալ ի գիտութիւն ումենքի, երբ մեր հարկատու Խատաւցիներին, որոնք նորերս ապստամբւել են, կը ճնշես: Գիտցիր, որ վաղուց սիրում եմ քեզ. ուստի աշխատիր պարգերես դուրս գալ Խատաւցիներին:»

Ես գրած պատասխանովս հնազանդութիւնս ու համաձայնութիւնս յայտնեցի, շարունակեց ընձնաւորը և նամակը Ամաթի ձեռքով ուղարկեցի սիրուհուս:

Խատաւցիների թագաւորին նամակ ուղարկեցի, յայտնելով, որ նամակս ստանալուն պէս զայ և հնազանդի, ապա թէ ոչ պատերազմ ենք մղելու: Առաջուց էլ զգուշացրի պատերազմի համար, որ յետոյ տմարդի տեղ չդնէր մեզ և չասէր թէ՛ զաղանազողի յարձակեցանք իր վրայ:

Նամակիս պատասխանին էի սպասում, երբ մի անգամ Ամաթից ուղարկած ծառան ինձ մի նամակ տւեց: Ամաթը գրում էր. «Սրտիդ վարդը քեզ կանչում է: Ես իսկոյն քայլերս ուղղեցի դէպի սրահը և երբ Ամաթը վարագոյրը յետ քաշեց՝ իմ ու սիրուհուս հայեացքները հանդիպեցին իրար: Նրկուս էլ ամաչեցինք և կարմրեցինք: Նկատելով այդ, Ամաթն ասաց. «Նա դարձիր, այժմ սա էլ է ամաչում: Գրանից յետոյ ես Ամաթին խնդրեցի, որ ինձ շարունակ նամակ գրի աննմանիս մասին: Քիչ ժամանակից յետոյ Խատաւցիների թագաւորից պատասխան ստացայ. նա գրում էր. «Նկէք, ձեզ սպասում են մեր պատրաստի զօրքը և ամուր բերդերը. ով էք

դուք, մենք ճանաչել անգամ չենք կամենում ձեզ և մի անգամ զգուշացէք այդպիսի յանդուգն նամակ գրելուց»:

Կարդալով այդ, ես իսկոյն պատերազմի պատրաստութիւն տեսայ: Գնալու ժամանակ Նեստան-Պարեջանը ինձ իր մօտ կանչեց և ասաց. «Արիացիր, Աստուած տայ, որ յաղթես Խատաւցիներին, ես չեմ դաւաճանիլ քեզ հակառակ դէպքում Արարիւն ինձ հող դարձնի»:

Առաջ խաղալով երեք օրից յետոյ հասանք պատերազմի դաշտը. Խատաւցիների Բամազ թագաւորը դեսպան էր ուղարկել մեծաքանակ ընծաներով ինձ յայտնելու, որ ինքը դալիս է հպատակութիւն ցոյց տալու. բայց մի բարի մարդ նրանց կողմից դուրս եկաւ և յայտնեց ինձ, որ Բամազը մտադիր է ծպտեալ կերպով զօրքը առաջ բերել և վրաս յարձակել: Այդպիսով այն բարի մարդը հատուցեց ինձ այն երախտիքը, որ հայրս ունեցել էր նրա վրայ, ինչպէս ինքն էր ասում:

Այդ լսելով, ես հրամայեցի թմբուկներ զարկել և առաջ խաղալ: Միմեանց յետեից քաղաքներ վերցնելով, վերջ ի վերջոյ Բամազին ստիպեցի յանձնել ինձ նշանաւոր քաղաքների և բերդերի բանալիները ահագին հարստութեան հետ միասին. 10,000 ջորի և ուղտ ուղարկեցի Փարսաղանին գանձով բարձած: Բամազից մշտական հպատակութեան պայման վերցնելով՝ ես դարձաւ տուն: Փարսաղանը մեծ պատուով ու շուքով ընդունեց ինձ և ի պատիւ ինձ սարքեց մեծ խնճոցք և որս: Խնճոցքին ներկայ էր և Նեստանը: Մենք, ինչպէս ասում են, այդ խնճոցքին կշտացանք իրար նայելուց:

Խրախճանքից չետոյ սիրուհիս ինձնից նամակով ուղեց այն թանկագին քօղը, որ ես ձեռք էի բերել պատերազմում, և որպէս սիրոյ գրաւական՝ ինքն էլ ինձ մի

վահան էր ուղարկել: Ես, բացի քօղից, ոսկեկար քուլաջան էլ ուղարկեցի նրան:

Ձանցաւ մի քանի օր, բարերար խնամակալներս կանչեցին ինձ և ասացին. «Ընքդ լաւ զիտես, որդի, որ մենք արու թագաժառանգ չունինք, ուստի կամենում ենք Նեստանին մարդու տալ և դահն էլ փեսացուն յանձնել. դո՛ւ ինչ խորհուրդ կը տաս»:

Թանկագին ընկեր, ասաց Ընձենաւորը Աւթանդիլին, որ լսում էր խորին ուշադրութեամբ, այդ խօսքերից յետոյ, զոդն ընկաւ ջանս ու թուլացայ. բայց նկատելով, որ նրանք դրական կերպով վճռել են, ես էլ չընդդիմացայ ու հաւանութիւն տւի: Իբրեւ ամենից չարմար փեսացու խնամակալներս Խւարազմտանի արքայազնին էին ընտրել ու արդէն միջնորդ էլ ուղարկել: Կայծակնահար դարձաւ տուն և օրէցօր սկսեցի հալել մաշել, ինչպէս մաշում է կրակից ամենայն ինչ: Նոյն երեկոյեան Ամաթից նամակ ստացայ, անտեսաննմանը ինձ կանչում էր: Գնամ տեսնեմ ի՞նչ. Նեստանը կատաղած վագրի նման ընծայած քօղս երեսին զցած ու թեկն ընկած հեկեկում էր: Ինձ տեսնելով ուղղւեց և վշտացած ձայնով ասաց.

— Ձարմանում եմ թէ ի՞նչ երեսով մտար այստեղ, այդ դաւաճան և ուխտդուժ. բայց քաջ յայտնի լինի քեզ, ստախոս, որ փոխարէնը Աստուծանից պիտի ստանաս:

Ես, չհասկանալով բանի էութիւնը, ասացի.

— Ձանցանքս ի՞նչ է:

— Միթէ դաւաճանն ու խարդախը արժանի է բացատրութեան. դու ինձ կրակ տւիր ու հեռացար. միթէ չզիտես, որ ինձ կամենում են տալ Խւարազմտանի թագաժառանգին, դու ո՞ր էիր հաւանութիւն տալիս ծնողացս այդ բանին:

Դրանից յետոյ նա ինձ յիշեցրեց թէ ինչպէս ես ուշաթափեցայ նրան առաջին անգամ տեսնելիս. ապա աւելացրեց. «Որովհետեւ դու ինձ դաւաճանեցիր, ուստի ես էլ ոչ քեզ եմ ուզում, ոչ էլ նրան. միայն իմացած կաց, որ դու կենդանի չես մնալ Հնդկաստանում»:

Երբ լսեցի, որ նա ուրիշին էլ չի ուզում, ես մի քիչ ուրախացայ, պատճառ, որ ինձ ուրիշի հետ չէր փոխում: Իրաւունք խնդրելով նրանից բացազրութիւն տալու, ես յայտնեցի, որ ոչ մի կերպ չէի կարող ընդդիմանալ, որովհետեւ նրա ծնողները զրականապէս վճռել էին արդէն:

— Ես, ասացի չքնադեղին, ոչ մի ժամանակ չեմ դաւաճանել և ոչ էլ կը դաւաճանեմ մինչև որ շունչս բերանիս է. դու ես իմ կեանքս ու սրտիս վարդը: Նա այդ խօսքերի վրայ մի քիչ ժպտաց և առաջարկեց խորհուրդ անել թէ ինչպէս առաջն առնել մեզ երկուսիս սպառնացող վտանգի դէմ: Մի քիչ խորհուրդ անելուց յետոյ վըճռեցինք, որ ես սպանեմ արքայազնին նախքան պատկուելը:

Այդպէս էլ արեցի: Փեսացուն հարսանիքի գիշերը բանակ էր դրել մեր քաղաքի դռների մօտ. ես գիշերով հարիւր կտրիճով անցայ բանակի միջով և, արքայազնի վրանը մտնելով, նրան աչնքան տւի պատերովը, որ խեղճը հոգին աւանդեց:

Պահապաններն աղմուկ բարձրացրին. բաց ես քաջերիս հետ դուրս պրծայ և ուղղակի փախայ բերդը: Իմ բարերար Փարսազանը երկրորդ օրը մարդ ուղարկեց ինձ ասելու.

— Այս ինչ բան բերիր գլխիս, ինչու ուրախութեան սգի փոխեցիր, որդի. եթէ աղջկա սիրում էիր, ինչու

առաջուց ոչինչ չասեցիր և ինչու Խաւաղմների մեղքը վզիս բարձեցիր:

Ես պատասխան ուղարկեցի ասելով.

— Արու ժառանգ չունենալուդ պատճառով Հնդկաստանը ինքնըստինքիան իմն էր, ուստի ինչպէս կարող էի թողնել, որ մի ուրիշը տիրապետէր, քանի սուրս մէջքիս էր. և երկրորդ, մի թէ ես կը թողնէի որ իմ սիրտս (նեստան) ուրիշը տանէր:

Ն.

ՆԵՍՏԱՆ-ԴԱՐԵՋԱՆԻՆ ՓԱՅՆԵԼԸ



յդ անցքից յետոյ ես զրկեցի սիրուհուս տեսութիւնից:

Մի անգամ տխուր տրտում դուրս գնացի դաշտը և ահա սա, (մատնացոյց անելով մօտը նստած Ամաթի վրայ) արագաքայլ հասաւ ինձ և ասաց. «Թագաւորը վճռեց քեզ սպանել, արքայազնին սպանելու պատճառով, սաստիկ էլ զայրացաւ, որ կանչելուն պէս դու չներկայացար. խստիւ յանդիմանեց նաև իր քրոջ Ղաւարին, որ իր թուլութեամբ ձեր սիրահարութեանը նպաստեց: Փարսազան թագաւորը վճռել է նրան էլ սպանել: Ղաւարն էլ, ինչպէս հանելու համար, հրամայեց երկու ստրկին, մի նաւակ պատրաստել. մինչ նրանց պատրաստելը Նեստանին ծեծով կապտացրեց և յանձնեց նաւավարներին: Նաւում նստացնելու ժամանակ Նեստանը փորձեց դանակով վերջ տալ իրան, բաց չյաջողեց. վերջը ինձ խնդրեց, որ սպանեմ իրան, բաց ես ոչ թէ սպանեցի, այլ երդւեցի մինչ կեանքիս վերջը փնտրել նրան և գտնել: Մինչ նրան կը փախցնէին՝ Ղաւարը անձնասպանութիւն գործեց»:

Այդ բոլորը լսելուն պէս ես սպառազինեցի և վաթսուէն կտրիճով ճանապարհ ընկայ:

Ամբողջ տասներկու ամիս որոնեցինք, բաց լուր էլ չառանք նրա մասին: Ամենքը թողին ինձ բացի Ասմաթից և երկու ծառայից: Քսան ամիս ծովի վրայ շրջագայելուց յոգնելով, դուրս եկայ ափ ու մի ծառի տակ քնեցի: Յանկարծակի աղաղակը զարթեցրեց ինձ, իսկոյն վեր թռայ և տեսայ սև ձիու վրայ նստած մի վիրաւոր մարդ, ձեռին սրի կտոր բռնած: Մտեցայ և հարցրի թէ ով է նա:

Վիրաւորը ինձ պատմեց, որ ինքը Մուղղաղանդարի Նուրեդին Փրիդոն թագաւորն է. նրա պապը այն երկիրը բաժանել էր իր երկու որդոց մէջ, այն կղզին իր լաւ որսավայրով ընկել է Փրիդոնի հօրը, բաց հօրեղբօր որդիք թշնամանօք վիճելի են համարել այդ կղզին. ուստի որսից ետ գալիս հօրեղբօր որդիքը կտրում են Փրիդոնի առաջ: Վերջինս թողնում է նսւը և նստում ձիու վրայ ու լողալով դուրս գնում, այնուամենայնիւ նրանք հասնում են, վիրաւորում Փրիդոնին և սուրն էլ կտրում:

— Իսկ դուք ով էք, հարցրեց ինձ վիրաւորը:

Ես յայտնեցի, որ իմ գլխիս անցածը պատմելու համար հարկաւոր է բաւական երկար ժամանակ: Նրա հետաքրքրութիւնը շարժեց ու ինձ տարաւ իրանց փոքրիկ, բաց սիրուն քաղաքը և մեծ հիւրասիրութիւն ցոյց տւաւ: Մանրամասութեամբ պատմեցի անցեալս:

Մենք այնքան բարեկամացանք իրար հետ, որ մի կարճ ժամանակից յետոյ ահագին պատրաստութեամբ գնացինք Փրիդոնի հօրեղբօր որդոց դէմ կռւելու: Ես և իմ նոր բարեկամը կարծես թէ մրցում էինք իրար հետ քաջութեան մէջ: Յաղթելուց յետոյ հօրեղբօր որդոց

կապած բերինք Մուղղաղանդար քաղաքը: Ամենքը զարմացան և սկսեցին զովել մեր քաջութիւնը: Սկսեց մի աննման խրախճանք, ուր, սակայն, ես վշտացած լուռ էի բոլորովին, որովհետեւ իմ մտածմունքը միայն նա էր:

Մի օր գնացինք որսի, հասանք մի ծովափի: Նայելով ծովին Փրիդոնն ասաց «Յիշում եմ, այստեղ էր, որ մի անգամ տեսայ մի ինչ որ սև բան. մօտենալով, նկատեցի մի նաւակ երկու արաբով: Այդ արաբները նաւակից դուրս հանեցին մի զեղանի լուսնանման աղջիկ, բաց նկատելով, որ ես նայում եմ իրանց և հետևում, առաջս կտրեցին և անհետացան»:

— Սիրելի Աւթանդիլ, ասաց հառաչելով Ընձենաւորը, ծնկներս թուլացան, երբ այդ լսեցի. իսկ խեղճ Փրիդոնը գլխին վայ էր տալիս և տուում. «Վայ ինձ, ինչու տրտմեցրի քեզ»:

Փրիդոնը նկատելով իմ ախտավախը սկսեց հանգըստացնել ինձ ասելով.

— Այս քաղաքը ամեն տեսակ լուրերի կենտրոն է և աշխարհի չորս կողմից այստեղ նաւեր են գալիս, հանգստացիր, անպատճառ մի բան կ'իմանանք սիրուհուդ մասին:

Երկրորդ օր Փրիդոնը նաւավարներ ուղարկեց ամեն կողմ նետանի հետքը գտնելու, բաց զուր. աննմանս ինձ համար անդառնալի կերպով կորած էր: Յոյսս կտրեց, ուստի խնդրեցի Փրիդոնին, որ ինձ արձակի: Մեծ դժւարութեամբ և լաց ու կոծով բաժանեցինք միմեանցից: Ես նորից որոնել սկսայ նրան, սակայն ոչ մի հետևանքի չհասայ:

Վերջապէս հասայ այս այրը, այստեղ ապրում էին հսկաներ. նրանցից մի քանիսին սպանելով, մի քանիսին էլ փախցնելով մնացի մենակ Ասմաթիս հետ: Թէ սրան և թէ

երկու մնացած ծառաներիս շատ խնդրեցի՝ վերադառնալ հայրենիք. բայց ծառաներս յանձն չառան և հսկաների հետ կռելիս երկուսն էլ սպանւեցան:

Ահա նրանից յետոյ խորշում եմ մարդկային կերպարանքից, սիրում եմ վայրենի տեղեր և դաժաններ:

Սիրուհուս երեսը ընձու նման զեղեցիկ լինելու պատճառով հագած եմ «ընծու մորթի»:

Տարիէլը, վերջացնելով իր պատմութիւնը, էլ չդիմացաւ. արցունքների կաշկանքներ էին, որ թափւում էին նրա աչքերից: Ամաթը նրան յոյս էր տալիս և մխիթարում:

Սրբելով արտասուքները նա ասաց Աւթանդիլին. —

— Դարձիր, եղբայր, արևիդ մօտ. որովհետև մօտ է տեսութեանդ ժամը:

Աւթանդիլը պատասխանեց.

— Ես չեմ կարող բաժանւել քեզնից. եթէ բաժանւեմ նոյն իսկ, աչքերս չեն ցամաքիլ. մի՞թէ չես լսել, որ երբ գովելի բժիշկը հիւանդանում է՝ նրա զարկերակը ուրիշն է տեսնում:

Այդ գիշեր, քնելու ժամանակ, երկուսն էլ երդմամբ եղբայրացան: Լուսաբացին Աւթանդիլը բաժանւեց նրանից: Հեռանալիս նա Ամաթին ասաց. «Քոյբիկ, երկու ամսից յետոյ կը դամ ձեզ տեսութեան. իսկ եթէ չեկայ, իմացէք, որ փորձանքի եմ հանդիպել»:

2.

ԱԹԹԱՆԴԻԼԻ ԴԱՐՁԸ ԱՐՄԵՒԱ



Աւթանդիլը հայձէպ հասաւ Արարիա: Ամենից առաջ դնաց իր կալածքը՝ ուր ընդառաջ էր

եկել նրա զօրքը: Աւթանդիլն և Շերմադինը (զօրքի հրամանատար, Աւթանդիլից նշանակւած) ջերմաջերմ համբուրւեցան: Այդտեղից ձիաւորներ սրընթաց հասան թաղաւորին և թաղուհի Թինաթինին Աւթանդիլի դարձը աւետելու: Ի պատիւ Աւթանդիլի դարձի՝ Բոստեան թաղաւորը տւեց մեծ խնճոյք. այդտեղ Աւթանդիլը պատմեց միառմի Ընձենաւորի մասին իր տեսածն ու լսածը: Ամենքը մեծ հետաքրքրութեամբ լսում էին նրան, նամանաւանդ Թինաթինը, որ մարմնացեալ ուշադրութիւն էր դարձել:

Թինաթինը բաւականին զարճանալուց յետոյ առանձնացաւ իր սենեակը և կանչել տւեց Աւթանդիլին: Նրանց խօսակցութեան նիւթը իրենց սէրն էր և այն չարաքններն, որոնց նրանք ենթարկւեցան միմեանց բացակայութեան ժամանակ: Թինաթինն ասում էր.

— Ներիր, սիրելիս, կրած չարչարանքներիդ համար:

— Ոչինչ, հոգեակս, կրած տանջանքներս, մեր բոլորի հետաքրքրութիւն շարժող Ընձենաւորին գտնելուց յետոյ, ինձ քաղցր են թւում. բայց ցաւօք սրտի պիտի յայտնեմ, որ մենք նորից բաժանւելու ենք. ես Տարիէլին, այն է Ընձենաւորին, ազնիւ խօսք եմ տւել յետ դառնալ:

Թէև Թինաթինի համար մահու չափ ծանր էր նորից բաժանւել իր սրտի հառորից, բայց որովհետև երդմնազանցութիւնը սաստիկ ատում էր, սիրով յօժարւեց:

Տուն դառնալով Աւթանդիլը մտածում էր.

— Պիտի հանդստանալ և համբերել. եթէ բարին ուղում եմ՝ չարին էլ պիտի դիմադրեմ ու դիմանամ. պիտի բացի իրանից աշխատել, որ մեր սիրոյ կայծերը առաջժմ հեռու մնան իրարից, ապա թէ ոչ կարող են բռնկւել:

Միւս օրը լուսանալուն պէս Աւթանդիլը թամբեց

ձին և զնաց վեզիրին խնդրեց, որ թագաւորին յայտնէ իր զնալու մասին Տարիէլի մօտ:

— Նա կենդանի մեռեալ է, աւելացրեց Աւթանդիլը. պիտի օգնել նրան և սփոփել:

Վեզիրը պատասխանեց. «Թէև յանձնարարութիւնդ կատարելով գլխատմամբ պիտի վարձատրւեմ, բայց տեսնելով դէպի ընկերդ տաճած այդչափ սէրդ, քեզնից օրինակ վերցնելով գնում եմ յայտնելու. դուն էլ գիտես, որ շատ անգամ ասելը լաւ է չասելուց, թէև երբեմն ասելն էլ է վնաս»: Այդ ասելով վեզիրը զնաց յայտնեց թագաւորին Աւթանդիլի մտադրութեան մասին, աւելացնելով, որ եթէ թոյլուութիւն չտրւի, նա կը փախչի, քանի որ, առանց Տարիէլի նրան ցերեկը գիշեր է թւում:

Բոստեանը սաստիկ բարկացաւ, վերցրեց աթոռը, խփեց, վեզիրի ձեկատը պատռեց ու ասաց.

— Ինչպէս համարձակեցար թոյլ, անշնորհք արարած, ինձ այդ յայտնելու, հեռացիր իսկոյն այստեղից. դու բոլորովին անյարմար ես վեզիրութեան համար:

Խեղճ վեզիրը արիւնոտ երեսով դուրս փախաւ՝ «ինչ որ մարդս իրան կ'անի թշնամին թշնամուն չի անի» փնթփնթալով: Գալով Աւթանդիլի մօտ պատմեց նրան բոլորը: Աւթանդիլը առանց մի րոպէ կորցնելու, ուղղակի զնաց Ներմադինի մօտ յանձնելու նրան թէ ընտանիքը, թէ զօրքը և թէ երկիրը: Յանձնելու ժամանակ պատուիրում էր Ներմադինին. «Բարին խրախուսիր, չարը սաստիկ, հաւատարիմների համար ոչինչ մի՛ խնայիր. դուն էլ պատրաստ կաց թագաւորի երկրորդը դառնալու և պաշտոնս ստանձնելու. իսկ այս կտակս, որ Բոստեան թագաւորին է ուղղած, կը յանձնես իրան»: Վտակում նա գրում էր. «Գիտնական Պլատոնն ասել է, ստորութիւնն և եր-

կերեսութիւնը վնասում են թէ մարմնուն և թէ հոգուն. ես չեմ ուզում զանազան պատճառաբանութիւններով քեզնից բաժանել, բայց, կարծեմ բարեկամին մոռացութեան չտալը մեր պարտքն է և վնասակար չէ. որ անւանի մահ գերադասելի է պարսաւելի կեանքից, այդ էլ յայտնի է քեզ. սիրում եմ Տարիէլին անչափ սիրով և առանց նրան մութ է շրջում ինձ համար արեգը. ունեցած զանձիցս ու հարստութիւնիցը ինչ որ հաւանես՝ ի յիշատակ քեզ համար վերցրու, իսկ ինչ որ չէ, խնդրեմ բաժանես աղքատներին, որբերին և այրիներին: Նրանք կը յիշեն ինձ իրանց աղօթքներում և կ'օրհնեն. վերջացնելով կտակս, իմ պաշտելի և թանկագին բարերարս, բաժանւում եմ քեզնից առողջութիւն և յաջողութիւն մաղթելով քեզ»:

Աւթանդիլը Ներմադինի հետ համբուրւելուց և լաց լինելուց յետոյ, խնդրեց Աստծուց բարի ճանապարհ, և յաջողութիւն, հեծաւ ձին և անհետացաւ:

Միւս օրը թագաւորը կանչեց վեզիրին և ասաց քաղցրութեամբ.

— Երէկ ի՞նչ էիր ասում, չեմ յիշում, մի քիչ վերդովւած էի:

Վեզիրը նախկին օրւայ ասածը կրկնելով դուրս եկաւ Աւթանդիլին գտնելու, բայց երբ ծառաները յայտնեցին նրան Աւթանդիլի փախուստը, նա վախից չհամարձակւեց մտնել և յայտնել թագաւորին այդ բոթը, յիշելով երեկւայ դէպքը: Թագաւորը տեսնելով, որ վեզիրն ուշացաւ, մարդ ուղարկեց նրա յետեից. բայց երբ այդ մարդն էլ չերեաց, այն ժամանակ թագաւորն ընկաւ կասկածանքի մէջ. «Չլինի թէ փախել է, որ այլևս ոչոք չի մտնում սենեակս» մտածում էր նա. ուղիղն իմանալու համար նա

հրամայեց ծառային կանչել վեզիրին: Վեզիրը վախվիս-
լով մտաւ և յանձնեց թագաւորին Շերմաղինից ստացած
Աւթանդիլի կտակը: Կտակը կարդալուն պէս ամենքն սկսան
լալ, իսկ թագաւորը միրուքը փետում էր ու ասում.

— Տէր, մենք ինչ արինք նրան, որ նա մեզ այս օրը
ձգեց. ակն սրդի, ինչու մեր արեւը խաւարեցրիր և ստւերդ
չքացրիր. ամբողջ զօրախումբը սպաների հետ թող սև
հազնեն, նրա ամբողջ հարստութիւնը բաժանեցէք որբե-
րին և չքաւորներին, կարելի է նրանց աղօթքն ու օրհնու-
թիւնը խաղաղութեամբ հասցնեն նրան իր նպատակին:

Է.

ԱՒԹԱՆԴԻԼԻ ՎԵՐՍՊԱՐԶԸ ՏԱՐԻԷԼԻ ՄՕՏ



Աւթանդիլը ինքն իրեն հետ խօսելով արա-
դաքայլ առաջ էր գնում շարունակ. միտեղ այծեամ էր
սպանում-մորթում, խորովում, ուտում, միւս տեղ քնում և
ապա կրկին ճանապարհ ընկնում: Վերջապէս հասաւ քար-
այրը, տեսաւ Ամաթին, փաթաթւեց, ու ապա հարցրեց.

— Ո՞ւր է տէրդ և եղբայրս:

— Դու հեռացար թէ չէ՝ նա էլ հեռացաւ ինձնից և
մինչև այժմ չգիտեմ՝ կենդանի է թէ մեռած, պատաս-
խանեց Ամաթը:

Աւթանդիլը, շանթահար եղած այդ լուրից, վշտա-
բեկ սրտով ասաց.

— Ի՞նչու չհամբերեց ու ինձ խաբեց, մի՞թէ ես
խոստմնադանց եղայ. Աստուծոյ իմ, այս ինչ անբախտ
մարդ եմ, ես այնտեղ թաղն ու պսակս թողած զրա հա-
մար փախայ. իսկ դա նոյն իսկ չսպասեց ինձ:

Ամաթը պատասխանեց. «Զինական քարի վրայ
գրած առածը ուղիղ է ասում՝ ով որ չի ուզում բարե-
կամ գտնել՝ նա իր գլխի թշնամի է:

Ամաթը խնդրեց նրան փնտրել ընձենաւորին և
գտնել գոնեա նրա զիակը: Աւթանդիլը, որ առանց Ա-
մաթի ասելու էլ վճռել էր գտնել Տարիէլին, ճանապարհ
ընկաւ և ամբողջ երեք օր ու զիշեր փնտրելուց յետոյ,
վերջապէս նկատեց շամբուաների մէջ մի ինչ որ բան:
Յաճ իջնելով, տեսաւ, որ Տարիէլն է. նա դառնագին ար-
տասւում էր: Աւթանդիլը համբուրեց նրան, բայց նա
ոչինչ չզգաց: Տարիէլի աջ կողմը ընկած էր մի առիւծ,
իսկ ձախ կողմը՝ մի ինձ: Աւթանդիլի կոշորը քիչ էր
մնում՝ պատուէր շատ աղաղակելուց, բայց Տարիէլը այն-
պէս էր ընկղմել դառն մտածմունքների մէջ, որ ոչինչ
չէր լսում: Վերջապէս նա հազիւ հազ ուշքի գալով ճա-
նաչեց Աւթանդիլին, համբուրեց նրան և ասաց.

— Ես իմ ուխտս, այն է՝ քեզ տեսնելս՝ կատարեցի,
այժմ թոյլ տուր հանգիստ մեռնեմ, միայն խնդրում եմ մար-
մինս գազանների կերակուր չդարձնես, այլ յանձնիր հողին:

— Ինչեր ես ասում, եղբայր, այդ ինչ սատանայ է
մտել ուղեղդ. ոչ ոք սիրահարւած չէ եղել ինչ է, ով է
այդպէս արել, ամօթ չէ մարդուն անձնատապանութիւն
զործել. մի՞թէ չգիտես, որ վարդ քաղելիս փշերը կը
ծակծկեն, լսիր ինձ, հեծիր ձիդ, գնանք, ցանկութեանդ
մի հետեիր:

Ընձենաւորը չէր ուզում յետ դառնալ իր մտադրութիւ-
նից: Ճարը կտրած՝ Աւթանդիլը գիմեց հետեւալ միջոցի:

— Ես տեսնում եմ, ասաց Աւթանդիլը, որ ինձ այլ
ևս չես սիրում, գոնեա կատարիր վերջին խնդիրս, մի ան-
գամ էլ հեծիր ձիդ, որ տեսնեմ և կշտանամ:

Աթանդիլը շատ լաւ գիտէր, որ, եթէ Տարիէլը հեծնի, մի կերպ նրա թախիծը կը փարատուի և կ'ազատուի մահաբեր մտածմունքներէն: Նա չսխալւեց. Տարիէլը համաձայնեց. վերջինիս մի քիչ առաջ տանելուց յետոյ Աթանդիլն ասաց.

— Ինչո՞ւ ես մոռացել Ամաթիդ, սիրուհուդ առաջին անգամ տեսնողին, նրա դաստիարակողին և քոյրացուիդ. չէ՞ որ նա քեզ վրայ էլ մեծ խնամք ունի. ապա ուրեմն ինչո՞ւ խեղճին թողել ես անտէր, անպաշտպան և անուշադիր:

— Ուղիղ է ասածդ, գնանք տեսնենք, պատասխանեց Տարիէլը: Ուրեմն սուտ չի ասած թէ՛ քաղցր լիզուն օձին էլ կը հանի իր բնիցը, ինչպէս և Աթանդիլը քաղցրութեամբ հանեց Տարիէլին մահալան գութից: Նրանք ճանապարհ ընկան դէպի քարայրը, ճանապարհին Աթանդիլը հարցրեց Տարիէլին նրա լալու պատճառը:

Տարիէլն էլ պատմեց. Վերք ես կանգնած էի շամբուտներում (եղեգներ)՝ տեսայ մի ինձ և առիւծ միմեանց յետևից վազելիս և խաղալիս: Նրանք կարծես երկու սիրահարներ լինէին. վերջը սկսեցին կռուել, առիւծը իր ուժեղ թաթերով ընձուն յաղթելուց յետոյ սկսեց հետևել նրան՝ սպանելու համար: Տեսնելով, որ նա ուզում է իր սիրուհուն սպանել, բարկութիւնս եկաւ և սպանեցի նրան: Առիւծին սպանելուց յետոյ բռնեցի ընձուն՝ համբուրելու ինձ այրող համբոյրով, բայց նա չթողեց և սկսեց շանկրոտել ինձ, ես չկարողացայ համբերել և, ոտնահար անելով նրան, սպանեցի:

Վերանք իրանց վարմունքով յիշեցրին ինձ սիրուհուս հետ իմ ունեցած կապը: Ես վաղուց է կեանքից ձեռք եմ վերցրել, իսկ նա դեռ ասլորում է. ինձ մահն էլ չի

մօտենում, իսկ նա դեռ հրճւում է լոյսով. այս բոլորից յետոյ մի՞թէ իրաւունք չունէի լալու:

— Սիրահարներին, մտիթարելով ասում էր Աթանդիլը, միշտ զանազան փորձանքներ է հանգիպում, բայց չպիտի վհատին. եթէ Աստուած չկամենար՝ ձեզ երկուսիդ առաջուց չէր միացնիլ. ուստի կարծում եմ, որ վերջի վերջոյ դուք միմեանց կը գտնէք և կը միանաք սուրբ սիրով:

Այսպէս զրուցելով նրանք հասան քարայրը: Ամաթը դուրս եկաւ զրկեց երկուսին էլ և շնորհակալութիւն առաքեց Աստծուն, որ նրանց յետ դարձրեց: Մտնելով քարայրը նրանք լաւ ճաշ արին: Ճաշին Տարիէլն ասաց Աթանդիլին.

— Դարձիր Սրաբիա, գոնեա դու ապրիր արևովդ և սիրոյ քաղցրութեամբ:

— Ախր, սիրելիս, ինչպէս յետ դառնամ, քանի որ նրա խնդիրքով եմ եկել մօտդ, եթէ ես կարողացայ օգնել քեզ, նրան մեծ ծառայութիւն մատուցած կը լինեմ. նա էր որ ասում էր ինձ շարունակ. «Դժուար գործ կատարողն է նշանաւոր մարդ, ուստի աւելի լաւ է գնամ փնտրեմ անտես-աննմանիդ, կարելի է մի կերպ գտնեմ նրան, և, եթէ մի տարուց յետոյ յետ չդառնամ այս քարայրը, իմացիր, որ փորձանքի մէջ եմ ընկել»: Տարիէլը չհակառակեց:

Միւս առաւօտեան երկու ընկերներ միասին դուրս գնացին ծովափը: Այդտեղ որս արին, կերան, քնեցին և առաւօտեան լուսադէմին Աթանդիլը ճանապարհ ընկաւ Փրիդոն թագաւորի կողմը, արտասուքի հեղեղներ թափելով: Բաժանւելով Տարիէլից նա ասաց. «Ո՛հ դու, աշխարհ, ինչու՞մ ես կայանում. ինչ է միտքդ, ինչ ես շուռ

տալիս մեզ, այդ ինչ: բնաւորութիւն ունիս, որ ինձ նման իւրաքանչիւր քեզ ցանկացողը ինձ նման լալիս է. որ տեղացուն որտեղ ես մեռցնում եւ որտեղ նրա համար գերեզման փորում, բայց Աստուած չի կորցնում քեզնից հալածւած ինչ:

Ը.

ԱՌԹԱՆԳԻԼ ԵՒ ՓՐԻԳՈՆ ԹԱԳԱՌՈՐԸ



Աթանդիլը ասողերի հետ զրուցելով եւ մինչեւ իսկ իր քաղցր երգերով թռչուններին գրաւելով՝ շրջեց ամբողջ եօթանասուն տը եւ վերջը մի ծովափին մի քանի նաւաւարների հանդիպելով՝ հարցրեց նրանց.

— Ո՞վ էք դուք, եւ ո՞վ է այս աշխարհի տէրը: Նրանք պատասխանեցին:

— Մենք քաջ եւ գեղեցիկ Նուրադին-Փրիգոն թագաւորի հպատակներ ենք:

— Շնորհակալութիւն, հէնց նրան եմ փնտրում, բայց որ կողմն է կենում՝ խնդրեմ, ինձ ճանապարհ ցոյց տաք:

Նաւաստիները սիրով կատարեցին Աթանդիլի խնդիրը եւ ցոյց տւին Մուլղաղանդար քաղաքի ճանապարհը: Դեռ քաղաքին հասած Աթանդիլը տեսաւ մի խումբ զինւորներ, որոնք որսով էին զբաղւած: Աթանդիլը զինւորներին մինին հարցրեց.

— Ո՞վ է այն, որ ամենքին հրամայում է:

— Նուրադին-Փրիգոնն է, եղաւ զինւորի պատասխանը: Ահա այդ միջոցին, մի կործ (թռչուն, КОИДОУЪ) թռաւ զօրքի գլխով եւ ոչ ոք չկարողացաւ իր ժամանակին նետահար անել նրան: Աթանդիլի նետ արձակելն ու կործի թափիթափ ընկնել մին եղաւ:

Զինւորները նկատելով այդպիսի մի ճարպիկութիւն՝ զինաթափ եղան եւ զմայլում էին Աթանդիլի գեղանի տեսքով: Թագաւորը տեսնելով, որ կարգը խանգարւեց եւ շրջանն էլ քանդուեց, մարդ ուղարկեց բանի էութիւնն իմանալու համար: Աթանդիլը նկատեց որ մարդը դէպի իրան է գալիս, ասաց. «Գնա՛ յայտնիր թագաւորիդ, որ ես մի օտարական եւ Տարիէլի երդմնեղբայրն եմ ու եկել եմ դործով իր մօտ:

Այն մարդը Աթանդիլի խնդիրը կատարեց: Փրիգոնը «Տարիէլ» լսեց թէ չէ՝ լաց եղաւ եւ, կանչելով Աթանդիլին, համբուրեց նրան:

— Գիտեմ, ասաց Աթանդիլը, հետաքրքրում ես Տարիէլով, ես իսկոյն յագուրդ կը տամ հետաքրքրութեանդ՝ պատմելով իմ եղբօր (թէ ես նրա ծառայ կոչուեցի եւ արժանի չեմ) եւ իմ գալուս մասին:

Աթանդիլը մանրամասնօրէն պատմեց, որ ինքը Արաբիայի Բոստեան թագաւորի սպարապետն է եւ որ մի անգամ, որսին, ծովի ափին տեսան մի ընձենաւոր, այդ ընձենաւորը իրանց մարդոց կոտորեց եւ անհետացաւ: Բոստեան թագաւորի հետաքրքրութիւնը շարժեց թէ ո՞վ էր նա. ուստի ինքը (Աթանդիլը) ստիպւեց երկար փնտրել ընձենաւորին, վերջապէս գտաւ նրան: Տարիէլը նրան պատմեց իր զլխով անցած պատմութիւնը: Այդ բոլորը Բոստեանին պատմելուց յետոյ կրկին այցելեց Տարիէլին: Աթանդիլը աւարտելով իր պատմութիւնը աւելացրեց. «Տարիէլը քո մասին ասում էր, որ դու տեսել ես ծովի ափին նրա լուսաշաղ արեւ Նեստանին. ահա այժմ եկել եմ խնդրելու՝ ցօյց տալ ինձ նրան տեսած տեղը եւ Նեստանին փախցնող արաբների ճանապարհը: Փրիգոնը ուշադրութեամբ լսեց Աթանդիլի

պատմութիւնը, տարաւ նրան քաղաք, սարքեց մի մեծ հանդէս և խնձոյք: Որովհետեւ Աւթանդիլը շտապում էր, ուստի յաճախ ասում էր Փրիդոնին.

— Տէր արքայ, ամեն մի բոպէ թանկ է ինձ և նամանաւանդ Տարիէլի համար, արձակիր ինձ, որքան կարելի է շուա, և ցոյց տուր իմ խնդրած տեղը:

— Աստուած օրհնի ճանապարհդ, բայց համարձակուով եմ ասելու, որ մենակ դժուար է քեզ այդ գործը յաջողեցնել, այդ պատճառով քո տրամադրութեան ներքոյ եմ թողնում ծառաներս և ուղտերս, պատասխանեց Փրիդոնը:

Աւթանդիլը վերցրեց չորս ծառայ և պաշար ու Փրիդոնի հետ ճանապարհ ընկաւ. Փրիդոնը, ցոյց տալով տեղը, բաժանեց նրանից:

Թ.

ԱԻԹԱՆԴԻԼԸ ՈՐՈՆՈՒՄ Է ՆԵՍՏԱՆ-ԴԱՐԵՋԱՆԻՆ



Այդ տեղից սկսած Աւթանդիլը էլ անց ուղարձ անող շթողեց, որ Տարիէլի սիրունու մասին չհարցնէր, բայց զուր ժամավաճառ էր լինում: Մի անգամ նա ծովի ափին տեսաւ մի քարւան և նրա հարցին, թէ ովքեր են նրանք, քարւանատէրերը պատասխանեցին.

— Մենք Բաղդադի մահմեդական՝ զինի չխմող՝ վաճառականներ ենք, տարակուսած մնացել ենք այստեղ, որովհետեւ ծովահէնների պատճառով ծով չենք կարողանում մոնել, ահա այս նոր ուշքի բերած վիրաւորւածը կենդանի վկայ կարող է լինել նրանց բարբարոսութեան, ձեզ էլ խորհուրդ չենք տալ մտնել ծովը:

— Մի վախենաք, ես ձեզ հետ եմ, իմ սուրս կըտրուկ է, գալիքը կը գայ, գնանք:

Վաճառականները այդ լսելով՝ սաստիկ ուրախացան, որովհետեւ չէին կարողանում շարժել ոչ առաջ և ոչ յետ: Ամենքը տեղաւորեցան նաւերում: Քիչ առաջ գնացին թէ չէ՝ նրանց վրայ յարձակեցին ծովահէններ իրանց նաւերով: Աւթանդիլը նաւի գլխին կանգնած իր երկաթէ գաւազանով մի քաշելով իննը-տասը հոգի էր պառկեցնում: Ծովահէնները նկատելով այդ՝ ցրեցան և մինչև անգամ մի քանիսը անձնատուր եղան վախից: Այդ յաղթութիւնից բաւական աւար հաւաքեցին: Վաճառականների ուրախութեանը չափ չկար. նրանք չէին իմանում թէ ինչով հատուցանեն Աւթանդիլին այդ բոլորի համար: Նրանք առաջարկեցին Աւթանդիլին ամբողջ աւարը, իրբեւ ամենաքաջին, բայց Աւթանդիլին ասաց. «Յաղթութիւնը ոչ թէ իմ շնորհիւ տարանք, այլ Աստուծոյ, ուստի շնորհակալ լինենք նրանից, որովհետեւ եթէ նա չուզենար, մենք չէինք յաղթիլ. մի բան միայն կը խնդրեմ և յուսով եմ, որ խնդիրս չէք մերժի. ես չեմ ուզում ձեր ոչ մի հարստութիւնը, ինձ ընտրէք ձեր գլխաւոր և ոչ ոքին չասէք թէ ով եմ ես, որովհետեւ գործս, որի համար եկել եմ ես այս քաղաք, այդպէս է պահանջում: Վաճառականները սիրով ընդունեցին նրա առաջարկութիւնը: Թիավարելով դէպի առաջ՝ նրանց պատահեց մի սիրուն քաղաք իր գեղեցիկ այգիներով:

Հասնելով ծովափը, նրանք իրանց նաւակները կապեցին մի այգու մօտ: Գտան և այգեպանին ու սկսեցին հարց ու փորձ անել քաղաքի անւան, նրա թաղաւորի և այլոց մասին: Այգեպանը պատասխանեց.

— Քաղաքիս անունն է Գուլանշար, իսկ թաղաւորի՝

Մեղիք — Սուխաւ: Մեր քաղաքը բաւականին ուրախ քաղաք է. այստեղ շարունակ հրճւանք է տիրում, ամառ-ձմեռ ծաղիկների մէջ ենք ապրում, որով շարժում ենք օտար-ների նախանձը: Ես վաճառականապետ Ուսենի այգեպանն եմ: Տէրս միւսնոյն ժամանակ կարգադրել է քաղաքս եկող բոլոր քարւանների, որոնք պարտաւոր են իրանց բերած ապրանքից ընծաներ մատուցանել նրան. դրանից յետոյ միայն իրաւունք է արւում նրանց ծախել բերած ապրանքը, այժմ նա այստեղ չէ. նրա պաշտօնը կատարում է նրա հիւրասէր կին—Փաթման-Խանումը, գնամ յայտնեմ ձեր գալուստը:

— Գնա՛, արա՛ ցանկացածիդ պէս, պատասխանեց Աւթանդիլը:

Այգեպանը գնաց Փաթմանին յայտնեց ամեն ինչ, չմոռացաւ յայտնել նաեւ, որ վաճառականների գլխաւորը շատ սիրուն տղամարդ է: Փաթմանը իսկոյն տասը մարդ ուղարկեց, նրանց համար քարւանսարաց պատրաստել տւեց և Աւթանդիլին սիրով ընդունեց: Ինքը Փաթմանը շատ էլ գեղեցիկ չէր. նա մի կարճահասակ, գեր ու զւարճասէր կին էր: Աւթանդիլը ներկայանալիս մատուցեց նրան թանկագին ընծաներ, բայց շուտ չկարողացաւ ազատել Փաթմանից:

— Գնացէ՛ք, վաճառէ՛ք ձեր ապրանքը, միայն չմոռանա՛ք ինչ որ ես ձեզ ասացի, ասաց միւս օրը Աւթանդիլը վաճառականներին: Աւթանդիլը հազին ունէր վաճառականի հանդերձ: Փաթմանը առաջին տեսնելուն պէս սիրահարւեց Աւթանդիլի վրայ և չէր իմանում ինչ կերպ խեղաէր այդ սէրը իր մէջ: Եթէ սիրահարական նամակ գրէր՝ քաշւում էր, որովհետեւ մտածում էր՝ չլինի թէ Աւթանդիլը խռովւի և այդպիսով նրա տեսնելուց էլ

զրկւի. բայց նրա սէրը հետզհետէ բորբոքւում էր ընթանալով բնական ճանապարհով: Այդ բորբոքման հետեւանքն այն եղաւ, որ Փաթմանը չդիմացաւ և նամակ գրեց, մտածելով, որ եթէ մէկը ցանկանում է բժշկել, պիտի իր ցաւը բժշկին յայտնի անպատճառ: Նամակում նա գովում էր Աւթանդիլին և խնդրում շուտափոյթ պատասխան:

Աւթանդիլը կարդալով նամակը՝ քմծիծաղ տւեց և արաց:

— Այդ ողորմելին դեռ չի իմանում թէ սիրոս ունի և ում համար այսքան տանջւում:

Աւթանդիլը պատասխանեց թէ համաձայն է գալ, միայն այն պայմանով, որ մօտը մարդ չլինի: Փաթմանի ուզածն էլ հէնց այդ էր. բայց այն ժամանակ, երբ Աւթանդիլը պատրաստւում էր գնալ Փաթմանի մօտ, մի նամակ ստացաւ նրանից, թէ այժմ անյարմար է գալ: Աւթանդիլն իրան անպատուած համարելով՝ ուշք չդարձրեց և գնաց:

Փաթմանը տեսնելով նրան՝ փաթաթւեց և համբուրեց: Հէնց այդ րոպէին ներս մտաւ մի մարդ ծառայի հետ և, նկատելով դրանց փաթաթւիլը, ասաց.

— Ձեմ արդելում, լիրբ, միայն լուսանալուն պէս կը տուժես այդ բոլորի համար. որդոցդ ատամներովս կը գզգզեմ, անառնի, դու ինձ խաչտառակեցիր:

Այս ասելով նա դուրս գնաց: Փաթմանը լալով ու մղկտալով գլխակոր ասում էր. «Կորան, զուր կորան որդիքս»:

— Ի՞նչ կայ, ի՞նչի ես լալիս, հարցրեց Աւթանդիլը:

— Էլ ոչինչ մի հարցնիլ. եթէ ուզում ես փրկել ինձ, սպանիր մեզ նկատող մարդուն և նրա մատիցը հանիր

մատանին, որովհետև եթէ նա հասնի արքունիք և պատմի իրան յայտնած գաղտնիքս, թագաւորը ինձ որդոցս հետ կը կորցնի դաւաճանութեանս համար: Աւթանդիլի առաց. «Ծէք ինձ մի մարդ, որ ցոյց տայ նրա տունը»: Ֆաթմանի ծառաներից մինը ցոյց տւեց այն մարդու տեղը: Դռան մօտ կանգնած երկու պահապանին սպանելով, Աւթանդիլը ներս մտաւ և, ժամանակ չտալով նրան օգնութեան կանչել, վզից բռնեց և սրով խոզխողեց նրան անկողնում: Ապա մատանին հանելով նրա մատիցը, դիակը նետեց ծովը: Աւթանդիլը վերադառնալով ասաց Ֆաթմանին.

— Հանգստացիր, սպանւած է նա. ահա ստացիր նրա մատանին և պատմիր թէ ով էր նա, ինչո՞ւ էր սպանուում քեզ և ինչո՞ւ էիր լալիս:

Ֆաթմանը, նրա ոտներն ընկնելով, ասաց.

— Ես ոտքերիդ հողին էլ արժանի չեմ, որովհետև դու փրկեցիր թէ ինձ և թէ որդոցս. այժմ հանգիստ արտով կարող եմ ամեն ինչ պատմել քեզ:

Ժ.

ՖԱԹՄԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ ՆԵՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ



աղաքիս սովորութեան համեմատ—սկսեց Ֆաթմանը—Նաւրուզի տօնին (նոր-տարի) առևտուրը ընդհատուում է և քաղաքիցս ոչ ոք չի հեռանում. ամենքը զուգուում-զարդարուում են և ամբողջ տասն օր թագաւորի մօտ ուրախութիւն անում: Նոր տարու օրը ամուսինս, որ վաճառականապետ է, տանում է բոլոր վաճառականներին թագաւորին ներկայացնում շնորհաւորելու.

ես էլ նրանց կանանց եմ տանում թագուհու մօտ նոյն նպատակով: Այս նորտարու օրը, բոլոր խաթուններին (տիկիւններին) թագուհուն ներկայացնելուց յետոյ՝ դարձանք մեր տուն մի քիչ զւարճանալու: Այդ միջոցին թախիժ պատեց ինձ: Հիւրերը այդ նկատեցին և մենակ թողին ինձ: Մի քիչ թարմանալու համար ես դուրս գնացի ծովի ափին գտնւած մեր այգին. ահա այդ այգուց նկատեցի ծովի երեսին մի սև կէտ, որ քանի մօտենում էր այնքան մեծանում էր: Այդ մի նաւ էր: Նաւաստիները մօտենալով ափին և չորս կողմը ոչոքին չնկատելով, վախովսելով նաւից դուրս հանեցին մի չքնաղադեղ աղջիկ. ես զմայլւեցի. նա կարծես պայծառ արեւ լինէր, իսկոյն կանչեցի ծառաներիցս չորս հոգուն և ասացի.

— Տեսնում էք այդ նաւը, կարծեմ նաւավարները մի գերուհի ունին. դնացէք առաջարկեցէք նրանց, որ այն գերուհուն վաճառեն. ինչքան գնահատեն՝ վճարեցէք. իսկ եթէ չհամաձայնեն՝ սպանեցէք նրանց և գերուհուն բերէք մօտս:

Ծառաներս տեսնելով, որ չեն վաճառում, սպանեցին նաւաստիներին և գերուհուն բերեցին մօտս. նա մի չքնաղ աղջիկ էր, որ չուտէիր, չխմէիր, միայն նրան նայէիր:

Այդտեղ Ֆաթմանը սկսեց լալ աղիողորմ կերպով: Աւթանդիլն էլ չկարողացաւ զսպել իրան և դառն կերպով սկսեց հեկեկալ. սակայն մի փոքր յետոյ խնդրեց աւարտել պատմութիւնը:

— Առաջ ընկալ, շարունակեց Ֆաթմանը, էլ տեղ չմնաց նրա վրայ, որ ես համբոյր չդրոշմէի, տարաջ տուն, նստացրի նրան թախթի վրայ. հարցրի՝ ով ես, ո՞ր աշ-

խարհից կամ ազգից, ովքեր էին այն արաքները, որ տանում էին քեզ, և հար։ Աննամանը ոչինչ չպատասխանեց, այլ սկսեց լալ։ Մի քիչ հանգստանալուց յետոյ ասաց նա.

— Դու ինձ ազատելուց յետոյ աւելի մեծ երախտիք ունիս ինձ վրայ քան թէ մայրս. էլ ինչիդ է պէտք քեզ իմ ով լինելը. դա մի ահագին պատմութիւն է. ուստի ոչ մի հարցմունքիդ չեմ կարող պատասխանել։

Վերջացնելով այդ, նա դարձեալ սկսեց լալ։ Ես նրա համար առանձին սեղան կահաւորեցի և մի աղախին աւելի։ Գեղանիս յամառութեամբ լռում էր. լռու էի նոյնպէս և ես։ Ամեն օր նկատում էի նրա առաջ արտասուքից դոյացած մի լիճ։ Ես աղաչում-պաղատում էի, որ նա յայտնէր՝ թէ ով է ինքը. բայց ապարդիւն անցաւ իմ ջանքս։ Ես մտածում էի թէ մինչև երբ պահեմ սրան այսպէս ծածկաբար. վերջ ի վերջոյ վճռեցի աննամանի մասին յայտնել ամուսնուս, թէ և դարձեալ կասկածում էի, որ նա մի օր թագաւորին հաճոյանալու համար կը յայտնէր ամեն բան։ Ամուսնուս երգւեցրի, որ աղջկայ մասին ոչ ոքի բան չասէր, և ապա պատմեցի բոլորը. յետոյ տարայ ցոյց տալու նրան այն արուսեակին։ Ամուսինս նրան որ տեսաւ՝ զմայլեց։ Նորից հարց ու փորձ արինք նրա ով լինելու մասին, սակաւն դարձեալ զուր։

— Ի՞նչու ես դեղնել, ցաւդ ի՞նչ է, յայտնիր, որ դարման անենք, հարցրինք մենք։

— Ոչինչ չգիտեմ, հանգիստ թողէք ինձ. ասաց վերջապէս նա և նորից սկսեց արցունքներ թափել։ Մի քանի օրից յետ, Ուսէն ամուսինս ասաց ինձ.

— Վաղուց է թագաւորի մօտ չեմ եղել, ուզում

չեմ այսօր դնալ։ Նա սինինների վրայ մարդարիտներ ու զանազան ընծաներ շարելով տարաւ իր հեռ թագաւորի մօտ։ Գնալիս ես զգուշացրի նրան ջիշեցնելով իր խոստումը։ Թագաւորը տեսնելով այնքան ակնեղէններ՝ զարմանում է և հարցնում ամուսնուս.

— Ուսէն, սրտեղից է այդքան ակնեղէն։

— Տէր արքայ, ունեցած-չունեցածս բոլորը ձեր շնորհածն է. բայց բերածս ոչինչ է, տէր, համեմատութեամբ այն ընծայի, որ ես պատրաստել եմ թագաժառանգի համար։

Այդտեղ ամուսինս մանրամասնաբար սկսում է պատմել թագաւորին հիւրերի ներկայութեամբ Նեստան-Գարեջանի մասին։ Այդպիսով ամուսինս երգմնազանց գտնեց, շարունակեց ֆաթմանը, — որովհետեւ ագռաւն ինչ գիտէ, վարդն ինչ բան է, կամ մի՞թէ էշին սազ կը զան պօղերը։ Թագաւորի հետաքրքրութիւնը շարժւում է և վաթսուսն զինուորած մարդ է ուղարկում մեր տուն ու պահանջում թագաժառանգին ընծայած աղջկան։ Ես խորը խոցեալ ու շանթահար այդ հրամանից, մերժեցի. բայց, նկատելով ամուսնուս ակներև դաւաճանութիւնը՝ մտայ Նեստանի մօտ և լաց ու կոծով պատմեցի նրան բանի էութիւնը։ Նա սառնասրտութեամբ պատասխանեց.

— Ե՛հ, ոչինչ, դժբախտութիւնն ինձ համար սովորական բան է. դա ոչ առաջինն է և ոչ էլ վերջինը կը լինի. զարմացիր միայն այն ժամանակ, երբ բախտաւորութիւն պատահի ինձ։

Նեստանին շատ ոսկի, մարդարիտ ու ակնեղէն տալուց յետոյ ճարահատեալ յանձնեցի նրան թագաւորի ուղարկած մարդկանց։ Թագաւորը ընդ առաջ եկաւ և, տեսնելով աղջկայ գեղեցկութիւնը՝ հիացած մնաց։ Ժո-

ղովուրդը միմեանց հրելով առաջ էր ընկնում աննմանին տեսնելու: Սարքւեց դափ ու զուռնան, քէֆ ու ուրախութիւն: Թագաւորը, Նեստան-Գարեջանին նստեցնելով իր կողքին, անընդհատ հարց ու փորձ էր անում— ճիշդապէս է, ո՞վ է նա. բայց նա քարի նման լուռ էր. Թագաւորի համբերութիւնը հատաւ. ուստի ասաց.

— Սա կամ սիրահարւած է և մտքով վերացած գէպի իր սիրեկանը, կամ զիտնական է, որ արհամարհում է ամեն ինչ. երեւի աշխարհն մի աւելորդ բան է սրա համար, որ այսպէս խորագնին կերպով նայում է ամենքին: Հագցրէք սրան Թագաւորական հալաւ. դրէք գլխին ոսկեայ թագ, տարէք Թագաժառանգի սենեակը և նստեցրէք ոսկեայ Թախթի վրայ: Դռանը կանգնեցրէք ինն աղախին սրան ծառայելու համար և պահեցէք մինչև որ դուս գալը. Ուսէնին էլ չմոռանաք տալ մեծ քանակութեամբ ոսկի և Թանկագին ակներ:

Այդ բոլոր հրամանները սրբութեամբ կատարւեցին. բայց Նեստան-Գարեջանը դարձեալ լուռ էր ու լուռ. նա մտածում էր. «Ո՞ւրմն եմ փնտռում, ո՞ւմը գտնում և ո՞ւմ համար են ինձ պատրաստում. բայց ո՞վ է տառապանքից մեռել, ի՞նչու չզուարճանալ, կարելի է զրանով նըպաստակիս հասնում եմ»: Մի անգամ նա ասաց աղախիններին.

— Ճանապարհ ցոյց աւէք և թողէք ինձ գնալու, թէ չէ ես ինձ կը սպանեմ, որի հետեւանքը այն կը լինի, որ բոլորդ էլ կը կորչէք. ահա, ինչ որ վրէս ոսկեղէն ու ակնեղէն կա, բոլորը ձեզ կը տամ, միայն թողէք ինձ:

Ոսկին աղախինների աչքը շլացրեց. նրանք համաձայնեցին. տեսնեմ կէս գիշերին մինը սաստիկ ծեծում է զուռն. բաց արիւն ինչ— առաջս կանգնած էր Նեստանը.

նա վզովս փաթաթւեց և ասաց. «Շատ և շատ շընորհակալ եմ բարութեանդ համար, որով հետեւ տւած ոսկիներովդ զլուսն ազատեցի. շտապիր մի ձի էլ տուր ինձ և զրանով արած բարութիւնդ կատարեալ կը լինի»:

Իսկոյն փախալ, դուրս բերի մի գեղեցիկ արագոտն նժոյգ և տւի նրան. նա հեծաւ քաջայրի պէս և սլացաւ: Թագաւորը ամեն կողմ խնդրական ուղարկեց նրան գտնելու, բայց իզուր: Ինձ մօտ էլ եկան հարցրին. ես պատասխանեցի. «Եթէ գիտենամ, Թագաւորի և ամբողջ ժողովրդի մեղքը վզիս լինի»:

— Սիրելի Աւթանդիլ, մնացածը յետոյ կը շարունակեմ. իսկ այժմ լսիր թէ ինչու այն մարդը, որին դու սպանեցիր և իմ բարեկամս էր, հետո թշնամացաւ: Այդ, իմ բարեկամին, ասաց Ֆաթմանը, պատմել էի Նեստանի փախուստը. նա շարունակ սպառնում էր ինձ թէ կը գնամ Թագաւորին կը յայտնեմ. ահա այսօր քեզ կանելուց յետոյ իմացայ, որ նա էլ է ուզում գալ. ուստի իսկոյն մարդ ուղարկեցի մօտդ, որ չգաս. բայց դու, երեւի նեղանալով ինձնից, եկար. նա էլ գալով և քեզ ինձ մօտ նկատելով, դուրս փախաւ մատնելու Թագաւորին՝ թէ ինձ և թէ որդոցս. այդ էր պատճառը, որ քեզ խնդրեցի սպանել նրան:

— Գրւած է՝ թէ ազգական կամ բարեկամ թշնամին բոլոր թշնամիներից աւելի զօրեղ թշնամի է. ահա այդ բարեկամ թշնամիդ սպանւած է, պատասխանեց Աւթանդիլը. իսկ այժմ շարունակիր թէ ինչ եղաւ Տարի-էլի սիրտն ու միտքը:

Ֆաթմանը շարունակեց.

ԺԱ.

ՆԵՍՏԱՆ-ԴԱՐԵՋԱՆԸ ՔԱՉԱՍՏԱՆՈՒՄ



Եստան-Դարեջանի փախուստից յետոյ, զըզ-
ւեցի թէ տանից, թէ որդեկերանցիցս և թէ ամեն բա-
նից. ևս չկարողացայ չորացնել արտասուքի այն առւակը,
որ հոսում էր աչքերիցս:

Մի անգամ թախծալի սրտով գնացի քաղաքի իջև-
անը. այնտեղ ճաշում էին հինգ մարդ: Նրանց զխա-
ւորն ասաց.

— Եղբայրներ, մենք ընկերացել ենք, բայց մինչ օրս
իրար դեռ լաւ չենք ծանաչում, նոյն իսկ իրար պատ-
մութիւն էլ չգիտենք, դա ամօթ է մեզ համար. ուստի
բարւոք չի լինիլ արդեօք, որ իւրաքանչիւրը մեզնից իր
զխի անցածը և սրտում եղածը պատմի: Նրանք սիրով
պատմեցին: Հերթը հասաւ զլիսաւորին: Նա ասաց.

— Իմ պատմութիւնս կարծում եմ աւելի հետա-
քրքիր պիտի լինի Նա ինքս քաջաստանցի եմ. մեր թա-
գաւորի մահւանից յետոյ տէրութիւնը սկսեց կառավարել
նրա քոյր՝ Դուլարդուխտը և պահել եղբօր որբերին:
Բոշակը, որ թագուհու աջ թեւն էր և բազմաթիւ
սարուկների տէր, մի անգամ վերցնելով հարիւր մարդ,
ի միջի այլոց և ինձ, գնաց աւազակութիւն անելու:
Գիշերով մի տեղ յանկարծ մի ինչ որ լոյս մեզ լուսա-
ւորեց. մի քանիսները ենթադրում էին, որ արշալոյս է.
Միւսները՝ լուսին: Նշմած այդ լոյսից ընկանք ամենքս
գետին, ապա զաղտնագողի մօտենալով տեսանք մի անձ-
նաւորութիւն: Նա, մեզ տեսնելով, կանչեց.

— Ո՞վ էք դուք, ես Գիւլանշարցոց ղեսպանն եմ,
գնում եմ Քաջաստան:

Երկար դիտելուց յետոյ տեսանք, որ դա մի արեգ-
նափայլ աղջիկ է՝ սեւթույր ձիու վրայ նստած: Խմբա-
պետ Բոշակը մօտեցաւ և հարցրեց.

— Ո՞վ ես և որտեղացի: Նա փոխանակ պատասխա-
նելու սկսեց լալ: Մենք դարձեալ մի քանի հարցմունք-
ներ տւինք, բայց երբ նա և ոչ մէկին չպատասխանեց,
այն ժամանակ Բոշակը հրամայեց թողնել նրան և տա-
նել Քաջաստան. իսկ ես գնացի Գիւլանշիր:

Այս պատմութիւնը շարունակեց Ֆաթմանը, և
շատ հաւանեցին ընկերները, իսկ ես դարձեալ յուզւեցի
լսելով իմ սիրելի Նեստանի պատմութիւնը: Պատմողին
բերի տուն ու նորից պատմել տւի բոլորը, ապա Քա-
ջաստանից Նեստանի մասին լուր բերելու համար երկու
մարդ ուղարկեցի: Նրանք վերադառնալով, յայտնեցին
ինձ, որ պահում են խիստ հսկողութեան տակ և ուզում
են արքայազն Բոսանի հետ պսակել:

Աւթանդիլը խեղճ ու թշառ Նեստանի պատմու-
թիւնը լսելիս լալիս էր. Ֆաթմանը կարծելով թէ իր
համար է լալիս՝ փաթաթւում էր ու համբուրում Աւ-
թանդիլին, բայց վերջինս իրան զսպում էր և մտքով
երբեմն Թինաթինի (իր սիրուհու) մօտ էր սաւառնում,
երբեմն էլ ծարիելի ու Նեստան-Դարեջանի մօտ: Երբ
Ֆաթմանը վերջացրեց թշառի պատմութիւնը, Աւթան-
դիլը փառք տւեց Ասածուն, որ վերջապէս հետքը գլտ-
նւեց, միայն մի բան պարզ չէր նրա համար այն է՝ թէ
Խնչպիսի մարդիկ են այն քաջերը. ուստի նրանց մասին
զաղափար կազմելու համար հարցրեց Ֆաթմանին.

— Կարծեմ քաջերը անմարմին էակներ են, — ուրեմն ինչներին է պէտք նրանց մեր արեգնափայլը:

— Նրանք այդ անունը կրում են ոչ թէ նրա համար, որ անմարմին են, այլ որովհետեւ անպարտելի են և յայտնի քաջեր, — պատասխանեց Ֆաթմանը: Աւթանդիլը միւս օրը շնորհակալութիւն յայտնելով Ֆաթմանին նրա հիւրասիրութեան համար՝ պատրաստեց յետ դռնալ: Ֆաթմանը դուրս բերեց թանկագին իրեր և զգեստներ ու շնորհեց նրան: Աւթանդիլն այդ հանդերձով այնպէս զուգւեց, որ մարդ չէր կշտանալ նայելուց: Քիչ ժամանակից յետոյ Աւթանդիլը կանչեց Ֆաթմանին իր մօտ և ասաց.

— Մինչ այժմ դու ինձ մի վաճառական էիր կարծում և իրաւունք ունէիր, քանի որ ես ոչինչ չեմ յայտնել իմ մասին քեզ. այժմ իմացիր, որ առաջդ կանգնած է Արաբիայի սպարապետը, ես փնտրում եմ այն խղճալի անոտեւաննմանին, որի մասին դու պատմեցիր: Ապա Աւթանդիլը մի առ մի պատմեց Ռոստեան թագաւորի, Ընձենաւորի երեւոյլ, իր Թինաթինի խնդիրքով Տարիէլին փնտրելու, Տարիէլի և Փրիդոնի հետ ծանօթանալու և հետքը գտնելու մասին, վերջը աւելացրեց.

— Ե՛կ դուն էլ օգնիր մեզ այս գործում, որ կարելի է մի կերպ գտնենք աննմանին ու այդպիսով ազատենք այն խղճ աչրւած-խորոված Տարիէլին իր անելանելի ու մահաբեր դրութիւնից և լաւ չէր լինի եթէ մի նամակ հասցնենք Նեստան-Դարեջանին:

Ֆաթմանը համաձայնեց: Իսկոյն գրեցին մի նամակ ու տւին սուրհանդակին Նեստանին հասցնելու համար: Նամակում գրում էին Նեստանին. «Պաշտօն և տաքացնող արեւ, չքնաղ և չնաշխարհիկ Նեստան. թէև դու

ոչինչ չես յայտնել ինձ, բայց, ես՝ Ֆաթմանդ՝ գիտենալով բնական աեղդ, գրում եմ այս նամակը և խնդրում, որ դու էլ մի նամակ դրեա քեզ համար սգացող Տարիէլին: Մեզ համար շատ կարեւոր է իմանալ թէ ովքեր են քո վրայ իշխողները, ուստի չմոռանաս գրել և նրանց մասին: Ուղարկիր նաև մի նշան քեզ համար դեգերող ու հեծծող Տարիէլին, ինձ մօտ է Աւթանդիլը Տարիէլիդ երգմեղքացրը»:

Սուրհանդակը նետի պէս սլացաւ և հասնելուն պէս ամենայն ճարպիկութեամբ նամակը յանձնեց Նեստանին: Վերջինս առաջ սկսեց երկիւղից դողդողալ, բայց սուրհանդակը նրան հանգստացրեց ասելով.

— Երկիւղ մի կրիր, ես Ֆաթմանից եմ ուղարկւած և նրա ստրուկն եմ, ինչ դու հեռացել ես, նրա աչքը չի չորացել. նրա մօտ է այժմ մի դեղեցիկ տղամարդ Աւթանդիլ անունով, ահա այդ Աւթանդիլն է, որ փնտրում է և կամենում է ազատել քեզ, այս նամակն էլ հէնց նրա խնդիրքով գրեց Ֆաթմանը:

Կարդալով նամակը, Նեստանը հառաչեց.

— Ախ, Աստուած, դարձեալ փնտրում են ինձ:

Մի քիչ յետոյ Նեստանը հետեւեալ պատասխանը գրեց Ֆաթմանին.

«Մօրիցս աւելի սիրելի և թանկագին Ֆաթման, բաժանելով քեզնից, այստեղ կարողանում եմ մի քիչ ազատ շունչ քաշել, ծառայողներս շատ են, ամենքը պատուում են ինձ, բայց ինչու, այդ յայտնի չէ ինձ, սրանից աւել ոչինչ չգիտեմ իմ մասին. ան երանի արժանանամ կորածիս: Մի նամակ էլ գրեց կարօտակէզ Տարիէլին. բացի նամակից նրան ուղարկեց և իր երեսի քօղը»:

Տարիէլին նա գրում էր.

«Մէջքս գրի: Է դարձել, լեղիս թանաք և մեռած սիրտս թուղթ. տեսնում ես, սիրելիս, ինչպէս աշխարհը և ժամանակը բաժանեցին մեզ իրարից. քեզ սիրող սիրտս առանց քեզ ի՞նչ անի. դառն է կեանքս, արևովդ եմ երկուում, որ մինչև այժմ չգիտէի թէ կենդանի ես դու, կենդանութիւնդ ինձ կեանք և լոյս ներշնչեց. սիրելիս, չիշիր ինձ, քո պատճառով կորածիս: Եթէ անցած բաներս պատմելու լինեմ լեզուս կը ցամաքի: Ես երկար տանջանքներից յետոյ անցաղթելի քաջերի ձեռքն ընկալ, աջնպիսի բարձրաբերդ ամրոցում եմ նստած, որ աչքս գետնին հաղիւ է հասնում. պահապաններս շուտ շուտ փոխւում են և վաղ նրան, ով կը համարձակի սրանց մօտենալ, կրակի նման այրում են: Կարօտակէզ Տարիէլս, չլինի թէ մըտքովդ անցկացնես սրանց հետ կուել, ոչ, սրանք անպարտելի են, եթէ քեզ սպանեն՝ ես աբէթի նման կ'այրւեմ: Քանի դեռ կենդանի եմ, ոչ ոքին անձնատուր չեմ լինի. ես քոն եմ և քոնը կը մնամ յաւիտեան, երկրիս վրայ քեզնից աւել ոչոքին չի ցանկանում ընկճւած Նեստանդ:»

Եթէ այստեղ չպատահենք միմեանց, հանդերձեւում գոնեա կը տեսնենք, եթէ մեռնեմ էլ՝ սէրդ հետս պիտի տանեմ: Կարծում եմ այս տեսակ դառնաշունչ կեանքից յետոյ մահը քաղցր կը թւայ: Մի սգար, ետ դարձիր, և մխիթարիր հօրս: Որպէս մեր սիրոյ գրաւական, ստացիր քօղդ:»

Սուրհանդակը ստանալով նամակներս քօղը բերեց, յանձնեց Ֆաթմանին: Երբ Աւթանդիլը բանի էութիւնն իմացաւ, վերցրեց քօղը և Տարիէլի հասցէով գրած նամակն ու ճանապարհ ընկաւ, Ֆաթմանին լաւ վարձատրե-

լուց և մեծապէս շնորհակալութիւն յայտնելուց յետոյ: Նա ճանապարհ գցեց նաև Փրիդոնից վերցրած ծառաներին, տալով նրանց մի այսպիսի նամակ Փրիդոնին ուղղած.

«Երկար վտանգներից և դժբախտութիւններից յետոյ, վերջապէս գտնւեց Նեստան-Նարեջանի տեղը, նա Բաջաստանում է, ես կամենում եմ ազատել նրան, յուսով եմ, որ դուք և ձեր եղբայրն էլ կ'օգնէք ինձ այս դործում: Ներողութիւն, որ ձեր կողմը չկարողացայ անցնել, շտապում եմ Տարիէլին աւետելու. խնդրեմ ծառաներիդ լաւ վարձատրէք: Նամակը յանձնելուց յետոյ Աւթանդիլը նստեց նաւակը և ճանապարհ ընկաւ:

ԺԲ.

ՏԱՐԻԷԼԸ, ԱԻԹԱՆԴԻԼԸ ԵՒ ՓՐԻԴՈՆԸ ԱԶԱՏՈՒՄ ԵՆ ՆԵՍ-ՏԱՆ-ԴԱՐԵՋԱՆԻՆ



առնելով քարայրը, Աւթանդիլն շտապեց աւետելու իր եղբօրը կենսաբեր լուրը: Այդ պատճառով «Տարիէլ» կանչելով գտաւ Ընձենաւորին: Վերջինս ուրախութիւնից գրկեց նրան և արտասւեց.

—Մի լար, սրտիս հատորի մասին քեզ հաճելի լուր եմ բերել. այն վարդը, որ մինչև այժմ թառամած էր, նորից բացւում է, հանդստացնելով ապում էր Աւթանդիլը: Տարիէլը չէր ուզում հաւատալ իր ականջին, որովհետև վաղուց նա ձեռքերը լացել էր իր սիրուհուց: Աւթանդիլը նկատելով դրա թերահաւատութիւնը, էլ չկարողացաւ համբերել, հանեց ծոցից Նեստանից ուղար-

կած քողն ու նամակը և յանձնեց Տարիէլին: Վերջինս քողը շփեց երեսին, դեղնեց, ուշաթափեց և յանկարծ տապալեց գետին: Ջուր էր Աւթանդիլը աշխատում ուշքի բերել նրան, երկար նա մնաց կիսամեռ: Աւթանդիլը մազերը փետելով, կուրծքը կոծելով ու հեկեկալով ասում էր. «Ջուր չեն ասում թէ զոված արագաշարժութիւնից խելացի համբերութիւնը լաւ է. վնաս եղուկիս ինչի չհամբերեցի ու այս օրը դցեցի սրան. էհ, ով է տեսել, որ մարդը անշնորհք սկսած գործը յաջողութեամբ աւարտի: Այդ ասելով Աւթանդիլը վազ տւեց ջուր բերելու: Ջրի ափին նա տեսաւ, որ Տարիէլը մի առիւծ է սպանել. վերցրեց նրա տաք տաք արիւնը, բերեց և սրակեց Տարիէլին: Ընձենաւորը ուշքի եկաւ և ծայրից ծայր կարդաց նամակը: Վերջացնելով ընթերցումը, նա դիմեց Աւթանդիլին.

— Եղբայր, ես անկարող եմ արած բարութեանդ փոխարէնը քեզ հատուցանել. Աստուծ թող վարձատրէ քեզ: Եւ ի նշան շնորհակալութեան, ամուր գրկեց նրան:

— Գնանք քարայրը, և խորհուրդ անենք թէ ինչ կերպ ազատենք անզուգական սիրունուդ, ասաց Աւթանդիլը և երկուսն էլ ուղևորեցան դէպի քարայրը:

Ամաթը, որ դուրսը նստած Տարիէլին էր սպասում, հեռուից երկուսին էլ ճանաչեց: Նրա սիրտը սկսեց թընդալ ուրախութիւնից: Մեր հերոսները մօտենալով, ուրախ ուրախ բացականչեցին. «Ամաթ, Ամաթ, ուրախացիր, Աստուծ մեզ յիշճաց, գտանք աննմանին»: Աւթանդիլը արագութեամբ իջաւ ձիուց, համբուրեց Ամաթին և ցոյց տաւ նամակը: Դաշեակը ճանաչեց իւր սանիկի ձեռքը և փառք տաւ Աստծուն: Մտնելով քարայրը Տարիէլն ասաց Աւթանդիլին.

— Երբ այս քարայրը վերցրի, ես գտայ այստեղ մի ահագին գանձարան բերնէ բերան լիքը, բայց դեռ ձեռք չեմ տւել, ուրեմն մոնենք, տեսնենք ինչ կայ:

Քառասուն դուռ կոտրտելով ներս մտան նրանք. ամենից առաջ գտան մի կնքած տապան, վրան գրած. «Այստեղ թաղւած են դիւթական զրահներ, այդ զրահներ հանողը կարող է յաղթել և սպանել հինգ թագաւոր»: Կափարիչը դէն ձգելով նրանք հանեցին երեք ձեռք զրահ, երկուսով իրենք զրահաւորեցան երրորդը պահեցին Փրիդոնի համար:

Մի քանի օր հանգստանալուց և ահագին քանակութեամբ ոսկի ու արծաթ վերցնելուց յետոյ, նրանք ճանապարհ ընկան Փրիդոնի մօտ: Դեռ չհասած Փրիդոնի մօտ, Տարիէլն ասաց Աւթանդիլին. «Եկ, խրտնեցնենք Փրիդոնի ձիաների ջուրը, պահապանները անշուշտ կը յայտնեն այդ բանը նրան, նա էլ դուրս կը գայ և մեզ տեսնելով՝ կուրախանայ: Այդպէս էլ արին. Փրիդոնը լսելով մի ինչո՞ւ ազմուկ և նկատելով ծառաների խլրլրտումն, դուրս ընկաւ սպառազին: Եւ:

Տարիէլը տեսնելով նրան ասաց.

— Ահա, որին ես ուզում էի: Այս ասելով առաջ ընկաւ և փաթաթեց Փրիդոնին: «Բայց դու սպառազինւած ես, երևի մեր գալը քեզ դուր չեկաւ, հմ, որ կուելու ես դուրս եկել», աւելացրեց Տարիէլը կատաղով: Երեքն էլ գնացին տուն, մաքրեցան ու հանգստացան: Սկսեց ուրախութիւն, որից յետոյ վճռեցին մինչև քաջերը տուն կը վերադառնան ազատել աննմանին: Այդ մտադրութիւնն իրագործելու համար վերցրին երեք հարիւր քաջ զինուոր, մի այդքան էլ ձիաւոր և ճանապարհ ընկան, թողնելով այդտեղ Ամաթին, որ իրանց հետ էին բերել:

Երբ մօտեցան Քաջաստանին, սկսեցին զիշերով և շատ զգոյշմանգալ: Հասնելով տեսան, որ քաղաքը ահագին լեռներով է շրջապատւած և մօտ տօսը հազար մարդ պահապան կանգնած: Այդ բանը ստիպեց նրանց խորհուրդ անել. «Մեր հարիւրը նրա հազարինը կը յաղթի, խոհեմութեամբ գործենք. ինչ անենք, որ շատ են. մեզ որակն է հարկաւոր, ոչ թէ քանակը, ասում էին նրանք:

— Ես երեխայութիւնիցս սովոր եմ զանազան լարերի և ձողերի վրայ անցնել. եկէք մի լար անցկացնենք, ես այդ լարով կ'անցնեմ, կը մօնեմ քաղաք, կը յարձակեմ և դուռը կը բանամ, դուք էլ պատրաստ կացէք դրանը, որ ներս խուժէք, ասաց Փրիդոնը:

— Այդպէս անյարմար է, պատասխանեց Աւթանդիլը, — սրիդ ձայնը լսելով՝ նրանք կարող են լարդ կրտրել և քեզ վայր տապալել. աւելի լաւ է, ես վաճառականական՝ բացց տակից զրահաւորւած՝ շորով մօնեմ, դռնապաններին կոտորեմ, կողպէքը փշրեմ, և ապա դուք մօտէք, կարծեմ այդպէս աւելի յարմար կը լինի. դուք ինչ կարծիքի էք:

— Ինչպէս տեսնում եմ, դուք ուզում էք յարձակել, իսկ ինձ այստեղ պարապ թողնել. Արուսեակս ինձ որ այստեղ պարապ նկատի, ինչ կ'ասի. ո՛չ, աւելի լաւ է ամեն մէկս վերցնենք հարիւր հոգի և յարձակենք պահապանների վրայ: Ո՞նց կը լինի, որ մեզանից մի խումբ գոնեա չխորտակի դուռը և չմօնի, պատասխանեց Ընձենաւորը:

Ամենքը հաւանեցին Տարիէլի տւած խորհուրդը: Լուսացաւ: Քաջերը կարծելով թէ ճանապարհորդներ են՝ ուշադրութիւն չդարձրին: Մեր քաջերի յանկարծ յարձակելն, քաղաքի դռներ խորտակելն ու ներս խուժելը

մէկ եղաւ: Քաղաքը երկրորդ գալստեան կերպարանք ստացաւ: Ամենքին անխնայ կոտորում էին. վերցրին նաև բերդը: Այդ մխորի մէջ Տարիէլը չէր երևում. Աւթանդիլն ու Փրիդոնը բարձրանալով բերդը, տեսան զետնի վրայ փռւած մօտ տասը հազար մարդ. այդտեղ էր գցած նաև Տարիէլի զրահը: Մօնելով սենեակը, նրանք նկատեցին արևն ու լուսինը, վարդն ու սոխակը միմեանց զրկած ու պարանոցով փաթաթւած: Նետտանը կամացուկ շնորհակալութիւն էր յայտնում Տարիէլին. ամենքը միաբերան շնորհաւորեցին Տարիէլին նրա յաղթութիւնը և փափագին հասնելը:

Հաւաքելով բոլոր թանկագին ակները և բարձելով 3,000 ջորու վրայ, նրանք ուղևորեցին Փաթմանի մօտ, կամենալով նրան էլ, ըստ արժանւոյն, վարձատրել: Բերդում թողին վաթսուոն զինւոր, որպէս պահապան: Ճանապարհին ծովերի թագաւորի մօտ դեսպան ուղարկեցին խնդրելու, որ նա Փաթմանի հետ առաջ գայ Քաջաստան ընծայ ստանալու համար: Ծովերի թագաւորը Փաթմանի հետ եկաւ, բերեց Տարիէլին ոսկէ պսակն ու աթոռը, թանկագին ակներով զարդարած: Նետտանը և Փաթմանը կրկին տեսնելով միմեանց հետ, համբուրեցան, փառք տւին Աստծուն, որ կրկին արժանացրեց նրանց միմեանց տեսութեան: Փաթմանը Նետտանին ընծայեց մի թանկագին քաթիպա, իսկ Փրիդոնին ու Աւթանդիլին մի-մի նոթոյդ իրանց ոսկեկուռ թամբով:

Տարիէլը Փաթմանին ընծայեց Քաջաստանում եղած բոլոր գանձը. Փաթմանը չէր ընդունում, ասելով.

— Սրանից յետոյ մահն էլ կեսնք է թւում ինձ, ինչո՞ւ էք զրկում ինձ աննմանիս տեսութիւնից, եթէ ուզում էք ինձ վարձատրել, տարէք ինձ ձեզ հետ, որպէս աղախին

Ծովերի թագաւորից մի նաւ վերցնելով, երեք եղբայրն էլ նստեցին ու ճանապարհ ընկան Ամաթի մօտ, որին առաջուց մարդ էին ուղարկել Նեստանի ազատութիւնը աւետելու: Ամաթը ուրախութիւնից էլ ոտի վրայ չէր կարողանում կանգնել: Նա հասնելուն պէս պինդ գրկեց Դարեջանին ու էլ չէր ուզում թողնել: Երկուսն էլ յորդառատ արցունքներ թափեցին: Դարեջանն ասաց.

— Սիրելիս, ես իմ տանջանքովս քեզ էլ բաւական տանջեցի, չգիտեմ ինչով պիտի երախտամացոյց լինեմ:

— Ձեզ տեսնելով ողջ եւ առողջ՝ ես մոռանում եմ բոլորը, փնռք Բարձրելոյն. պատասխանեց Ամաթը:

Փրիդոնի մեծաւորները ընդառաջ էին եկել չնորհաւորելու Տարիէլին: Ամենքը մտան մեծ պատուով ու փառքով Մուղղանդար քաղաքը:

ԺԳ.

ԵՐԿՈՒ ՀԱՐՍԱՆԻՔ



արիէլն ու Նեստան. Դարեջանը նստած էին ոսկեայ գահի վրայ, տակը զիպալներ փռած: Դրանց զլխին շաղ էին տալիս ոսկեփոշի: Հարսանիքը կառավարում էր ինքը Փրիդոնը:

Մի քանի խումբ երաժիշտներ էին նւագում: Նորապսակներին մատուցին իննը բաղի ձուի չափ մարգարիտ, որոնցից մինը գիշերով արեւի պէս էր փայլում: Աւթանդիլն էլ մի տապակով մարգարիտ ստացաւ: Ամբողջ ութ օր տեւեցին հարսանիքը եւ ընծայաբերութիւնները: Հարսանիքը վերջացնելուց յետոյ Տարիէլն ասաց Փրիդոնին.

— Դու, որպէս իմ մեծ եղբայր, քաջ գիտես թէ որքան անձնագործութիւններ արաւ Աւթանդիլը ինձ համար. այժմ չգիտեմ, ինչով հատուցանեմ նրան. եթէ ասես ոչնչով, սխալած չես լինիլ: Մնում է աշխատել նրան էլ արժանացնել իր փափաղին, ապա թէ ոչ ես տուն դարձողը չեմ. ուստի լաւ կանենք եթէ հէնց այստեղից զնանք Արաբիա: Աւթանդիլը երբ իմացաւ այդ բոլորը, ծիծաղեց եւ ասաց Տարիէլին.

— Քինաթինս, Արաբիայի թագուհին, խաղաղութեամբ կառավարում է Արաբիա եւ ինձ սպասում. նա տանջանքների չի ենթարկւած եւ ոչ էլ Քաջաստանի բերդում բանտարկւած, որ ազատենք նրան. իմ միակ վերջին ցանկութիւնս Տարիէլին եւ Նեստանին Հնդկաստանի գահի վրայ տեսնելն է, ուրեմն աւելորդ է ձեր օգնութիւնը ինձ համար: — Տարիէլը չհամաձայնեց, առարկելով, որ կամենում է տեսնել Աւթանդիլի մեծաւոր եւ բարերար Բոստանին: Փրիդոնը տեսնելով, որ Աւթանդիլը համաձայն է՝ ընտրեց ամենաընտիր սարուկներ եւ ուղեւորեց Տարիէլի ու Աւթանդիլի հետ դէպի քարայրը: Այստեղ Տարիէլը նրանց հիւրասիրեց եղջերուի մսով, Փրիդոնի մարդոց զանձարանից ահագին քանակութեամբ զանձ բաժանեց, քնացածը ընծայեց Փրիդոնին ասելով. «Իժար թէ կարողանամ պարտքդ վճարել. բայց ասած է՝ բարութիւն անողի վերջը լաւ է»:

Նախ քան Արաբիա հասնելը, Տարիէլը ղեսպան ուղարկեց Բոստան թագաւորին ասելու.

— Ես, Հնդկաստանի թագաւոր Տարիէլ, գալիս եմ քեզ տեսութեան. չնայած ես քեզ մի անգամ վիրաւորեցի սպանելով ծառաներիդ, բայց յուսով եմ մեծահոգութեամբ կը ներես ինձ. իմ քեզ մատուցանելու ըն-

ծաս ձեր սանիկ Աւթանդիլն է. նրանից մեծ զանձ ես չունեմ:

Այս լուրն առնելուն պէս, Բոստեանը մի խումբ ձիաւորներով առաջ եկաւ: Աւթանդիլն ամաչեց երեւալ, ուստի Տարիէլ առաջ գնաց, աջն առաւ համբուրեց, չփեց ու ասաց.

— Ձեր սանիկ Աւթանդիլը ինձ վրայ այնքան բարիք ունի, որ ես անկարող եմ երախտիքս հատուցանել: Ահա չոգած խնդրում եմ չմերժես Աւթանդիլին տալ կնութեան քո դուստրը, նրանք իրար անհուն սիրով սիրում են. ուրեմն մնում է օրհնել նրանց և բախտաւորացնել: Բոստեան թագաւորը վերկացնելով նրան ասաց.

— Ես երկուսի համար հոգիս էլ չեմ խնայիլ, թող օրհնեալ լինին:

Աւթանդիլը համաձայնութիւն առնելով չոգեց ու համբուրեց Բոստեանին: Այդ տեղից ամենքը գնացին միասին Թինաթինի մօտ: Երբ մօտն պալատը, Տարիէլը Աւթանդիլի ձեռից բռնելով՝ տարաւ նստացրեց Թինաթինի կողքին գահի վրայ: Երկուսն էլ, ինչ ասել կ'ուզի, անչափ ուրախացան: Միայն Թինաթինը մի քիչ ամաչում էր: Հայրը նկատելով այդ, ասաց.

— Դստրիկս, ինչ ես ամաչում, միթէ չգիտես զիտունների ասածը, որ անարատ սէրը միշտ յաջողութեամբ է պսակում: Ասուած ձեր երկուսիդ երկար կեանք և երջանկութիւն պարգևի. իսկ ինձ արժանացնի ձեր մի բուռն հողին: Օրհնելով դրանց, Բոստեանը յայտարարեց Աւթանդիլին Արաբիայի թագաւոր: Տարիէլը նորապսակներին շնորհաւորելուց յետոյ Թինաթինին ասաց. «Ամուսինդ եղբայրս լինելով, յուսով եմ, որ դուք էլ քոյր կը լինէք այսուհետեւ: Երկրորդ օրը սկսեց հարսանիք,

անթիւ ու անհամար ոչխար ու կով մօրթւեցան, խմորների համար զինու 100 աղբիւր պատրաստեց. ամենքը արշալոյսից սկսած մինչև վերջալոյսը ուրախութիւն էին անում: Օդը թնդում էր զանազան նւագարանների ձայնով. Ոչ մի չքաւոր կամ խեղանդամ չմնաց, որ առատութեամբ ողորմութիւն չստանար: Բոստեանն էր կարգադրողը: Նա Տարիէլին իր ամուսնու հետ նստացրեց առաջին տեղում և ասաց.

— Դուք էք ամենքի լոյսը, թագաւորաց թագաւորը և ցանկալի հիւրը. ուստի ձեզ է պատկանում առաջին տեղը: Ապա Փրիդոնին նստացրեց Աւթանդիլի մօտ: Մի քիչ յետոյ սկսեց ընծայաբերութիւնը: Առաջին ընծան մատուցին Տարիէլին ու Նեստան Ղարեջանին: Ընծայաբերութեան նիւթերն էին՝ թանգագին ականեր, ոսկի, ալմազներ, գեղեցիկ ու արագընթաց նոյզներ: Մօտ մի ամիս լաւ ժամանակ անցկացնելուց յետոյ, Տարիէլը թոյլտուութիւն խնդրեց Բոստեանից ստանալու ասելով, որ երկիրը թշնամու ձեռին է, հարկաւոր է շտապել:

Բոստեանը համաձայնեց ու պատուիրեց Աւթանդիլին վերցնել զօրքը և զնալ Տարիէլին օգնելու: Տարիէլը չէր համաձայնում, նա կամենում էր նորապսակներին հանգիստ թողնել: Աւթանդիլը լսելով այդ, պատասխանեց.

— Մաղրոմ էք ինձ, ինչ է, ուզում էք ասեն, որ ես ամուսնուս պատճառով տանը մնացի. այդպիսի տմարդութիւն ես չեմ անիլ:

Հաւաքելով մօտ 80,000 մարդ, նրանք մեծ դժուարութեամբ բաժանեցան Թինաթինից ու Բոստեանից. երեք թագաւոր 80,000-ի զլուխ անցնելով, հասան Տարիէլի հայրենիք Հնդկաստանը, և քիչ ժամանակից յետոյ

նրան հռչակեցին Հնդկաստանի թագաւոր: Մի քանի
օրից յետոյ Տարիէլը կանչելով Ասմաթին ասաց. «Թան-
կազին Ասմաթս, քո արածը մեր վերաբերմամբ ոչ մի
ծնող ու դայեակ չէ արել աշխարհումս, ուստի քեզ եմ
շնորհում եօթը թագաւորութեանս մի մասը. ազատ
ես ամուսնանալ ում հետ և կամենաս:


Ասմաթը ոտներն ընկնելով շնորհակալութիւն յայտ-
նեց նրան:


Փրիդոնն ու Աւթանդիլը, Տարիէլից լաւ հիւրասիր-
ւելով դարձան իրանց հայրենիքը:

Դրանից յետոյ մեր հերոսները սկսեցին սիրով ու
խաղաղ ապրել իրար հետ և արդարութեամբ կառա-
վարել բոլորին: Մի խօսքով դրանց հպատակները
թշուառութեան ու չքաւորութեան մասին զաղափար
չունէին: Ընձենաւորը, Աւթանդիլը և Փրիդոնը իրանց
անձնւիրութեամբ, ընկերսիրութեամբ և ողորմածու-
թեամբ օրինակ դարձան ուրիշներին:



7580





Վաճառում է ըստ իր հայ գրավաճառանոցներում:

2013

23642

